

ՓՈՒԹՆԻ ՄԻԱՅԵԱԼ ՌՈՒՄԻԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՅԱԳԹԱՆԱԿ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ

Ռուսիոյ տարածքին երկ տեղի ունեցան խորհրդարանական ընտրութիւններ, որոնց ընթացքին, ըստ նախնական արդիւնքներու, վճռական յաղթանակ արձանագրեց Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի Միացեալ Ռուսիա կուսակցութիւնը: Կուսակցութիւնը ստացած է քուէներու շուրջ 37 առ հարիւր: Երկրորդ դիրքը կը գրաւէ ընդդիմադիր Համայնավար կուսակցութիւնը՝ քուէներու 15 առ հարիւրով: Խորհրդարան մուտք գործեցին նաեւ կառավարամէտ երկու կուսակցութիւններ՝ Վլադիմիր Փիրիսովսկիի Այատական - Ժողովրդավարական կուսակցութիւնը եւ ձախակողմեան նորաստեղծ Հայրենիք կուսակցութիւնը, քուէներու յաջորդաբար 12 եւ 9 առ հարիւրով: Ռուսիոյ խորհրդարանի երեսփոխանական պալատը՝ Տումայն, կը բաղկանայ 450 երեսփոխանական անդամներէ:

ՆԱԽԱԳԱՐ ԼԱՅՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԱԽԱԳԱՐ ԱՊՏԵԼԱԶԻԶ ՊՈՒԹԱՅԼԻՔԱՆ



Նախագահ Վոր. Էմիլ Լախուտ Պապատայի մէջ անցեալ շաբաթավերջին ընդունեց Ալեքսանդրիոյ նախագահ Ապտէլայիվ Պուրաֆիքան, որուն հետ քննարկեց Լիբանան - Ալճերիա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ փոխ վարչապետ Իսամ Ֆարէս:

Նախագահ Լախուտ հանդիպումին ընթացքին շեշտեց, որ վերջին տարիներուն ընթացքին լիբանանեւալճերիական յարաբերութիւնները բարգաւաճում արձանագրած են եւ ամրապնդը-

Շար.՝ էջ 2

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԻՆ

ՎԱՍԱՍ ՊԱՏՐԱՍՏ՝ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԵԹԵ...

Գահիրէի մէջ տեղի ունեցած բանակցութեանց Համաս եւ պաղեստինեան արմատական այլ հատուածներ յայտնած են, թէ Իսրայէլի մէջ անձնասպանական գործողութիւններուն վերջ տալու պատրաստ են՝ պայմանաւ որ բանակը դադարի իրենց անդամները սպաննելէ եւ ընդունի այլ պայմաններ, սակայն անոնք ըսած են նաեւ, թէ իրենց կը վերապահեն զինուորներու եւ գրաւեալ հողամասերու բնակիչներուն վրայ յարձակելու «իրաւունքը»:

Երուսաղէմի մէջ, վարչապետ Արիէլ Շարոնի մօտիկ աղբիւր մը յայտնած է, թէ Իսրայէլ պիտի մերժէ պաղեստինեան հատուածներուն կողմէ մասնակի որեւէ զինադադար:

Եգիպտոս, որ Մ. Նահանգներու հետ բանալի միջնորդ մըն է, առաջարկած է մէկ տարուան համապարփակ զինադադար մը, որ պիտի վերակենդանացնէ բանակցութիւնները, որոնք երէք տարուան բրտութեանց պատճառով ընթացքէ դուրս եկած են:

Պաղեստինեան 12 հատուածները Գահիրէի մէջ բանակցութեանց սկսած են Հինգշաբթի օր: Շարոնի մօտիկ աղբիւրը երէկ շեշտած է, որ պաղեստինցիները ստիպուած են «սահաբեկական ենթակառոյցը» քանդել՝ համաձայն ամերիկեան զօրակցութիւն վայելող «ճամբու քարտէս»ին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԲԵՐՈՒՆ ՄԷՋ ՏԱԳՆԱՊ

Յայտնապէս չհամոզուելով, թէ պիտի կարենայ աշխատիլ պաղեստինցի վարչապետ Ահ Շար.՝ էջ 10

ԵՐԵՒԱՆ

ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԶՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ

Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահները՝ Եւրի Մերվիլալով (Ռուսիա), Հանրի Ժաքոյէն (Ֆրանսա) եւ Ռուտոլֆ Փերինա (Միացեալ Նահանգներ) եւ անոնց ընկերակցող, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Վիաչեսլաւ Տրուպինով Պաքոյի մէջ տեսակցելէ ետք Արաբիանի դեկավարութեան հետ Շաբաթ, 6 Դեկտեմբերին հասան Երեւան:

Հայաստանի նախագահի նստավայրին մէջ տեղի ունեցաւ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ միջազգային միջնորդներու հանդիպումը, որուն մասնակցեցան նաեւ Հայաստանի արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարներ Վարդան Օսկանեան եւ Սերժ Սարգսեան:

Հանդիպումէն ետք կայացած մամուլի ասուլիսին ընթացքին



Մերվիլալով, Ժաքոյէն եւ Փերինա

Մինսքի խմբակի ամերիկացի նախագահ Ռուտոլֆ Փերինա յայտնեց, որ միջնորդները նոր առաջարկներ չեն ներկայացուցած. «նախկինայնէ» չեն կատարած երկու երկիրներու նախագահներուն, եւ նշեց, թէ իրենց հիմնական նպատակն է գոյու-

թիւն ունեցող առաջարկները համադրել, որոշ բարեփոխումներու ենթարկել, եւ ոչ չնոր առաջարկներ մշակել: Ան նախագահ Քոչարեանի հետ հանդիպումը նկատեց արդիւնաւէտ եւ կարեւոր:

Հանրի Ժաքոյէն իր

Շար.՝ էջ 3

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի 75ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ը ԿԱՌՈՅՑ ԶԷ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԶԷ, ՄԻՈՒԹԻՒՆ ԶԷ, ԱՅԼ՝ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է ԲԱՌԻՆ ԱՄԷՆԷՆ ԽՈՐ ԵՒ ՎԱԻԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ»



Ashnag


28 Մայիս 1928ին Գահիրէի մէջ հիմնադրուած է ամբողջ 75 տարի Սփիւռքի եւ հայրենիքի մէջ աշխուժ գործունէութիւն ծաւալած, հայ մշակույթի արթուն պահպան, այդ շունչով ու

հայեցի կրթութեամբ սերունդներ կերտող ու գործը խօսքին վուզողող Հայ կրթական եւ մշակութային միութեան 75ամեակը մեծ շուքով նշուեցաւ երէկ, Կիրակի, 7 Դեկտեմբերի առաւօտեան ժամը

11:30ին, «Յակոբ Տէր Մելիքոնեան» թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայացուցչութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին կող-

քին ձեռնարկին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, Հայ Կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Ազգարեան, Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կեդրոնական մարմինի ատենապետ վեր. Փօլ Հայտնութեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ ընկ. Երուանդ Փամպուրեան եւ ընկ. Ալպէրք Աճէմեան, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան եւ անդամներ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Սնդրանիկ Մարրիեան, «Համազգային»ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, «Համազգային»ի Ծրջանային վարչութեան անդամներ, պապային միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Չաքար Քէշիշեան, որ «Համազգային»ի 75ամեակը նկատեց առիթ մը մշակույթի ու դպրութեան տէր



Ashnag

ու ծառայ դառնալու կոչումով ծնունդ առած, տարագիր հայրութեան գոյութիւնը երաշխաւորելու նպատակով գործած եւ արհիւն ու քրտինք թափած, նոր ծրագիրներով եւ հեռանկարներով տրոփող եւ միեւնոյն ատեն իր նախնիներուն կտակին հաւատարիմ մնացած «Համազգային»ի ուխտը վերանորոգելու:

Ան հաստատեց, թէ 75ամեակը ուրախութեան պահ մըն է մանաւանդ այն պատճառով, որ «Համազգային»ը իր գործունէութեան ընթացքին յաջողած է գործել դժուարին պայմաններու մէջ եւ պահել իր վարկը: Կառուցողական իր նպատակները իրականացնելու համար, որոնք նուիրումով գործած են

Կ'ԸՍԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Համազգային»ի յարկին տակ եւ իրենց ներդրումը ունեցած են մշակույթի պահպանման, պահը ուրախութիւն առթող է նաեւ այն մշակույթի գործիչներուն համար, որոնք «Համազգային»ի երդիքին տակ

ին»ի շունչով ապրած բոլոր անձերուն համար, նշեց ան: Չ. Քէշիշեան շեշտեց, թէ 75ամեակը ուրախութեան եւ հպարտութեան առիթ է յատկապէս լիբանանահայութեան համար, որ եղած է «Համազգային»ի շունչով ապրած բոլոր անձերուն համար, նշեց ան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երեւան, 22 Հոկտեմբերի 2003 թ.
Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 75ամեակին առիթով

Շնորհաւորում եմ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան մեծ ընտանիքի անդամներին Համազգայինի հիմնադրման 75ամեակի առթիւ: Համազգայինն այսօր աշխարհասփիւռ մի կառույց է, որն իր տասնամեակների անդուրձաններով, բազմաթիւ կրթական հաստատութիւններով, մշակութային օժանդակներով, հրատարակութիւններով, թատերախմբերով ու պարախմբերով, համազգայինական մտաբերականների ամէնօրեայ նուիրումով ծառայում է ազգային դիմագծի եւ ինքնութեան պահպանմանը:

Այսօր, երբ Հայրենիք - Սփիւռք յարաբերութիւնների զարգացման համար ստեղծուած են բարենպաստ պայմաններ, առանձնակի է կարեւորում եւ արժէքաւորում «Համազգային»ի դերը Հայրենիք - Սփիւռք հոգեւոր կամրջի ամրապնդման եւ կայացման գործում:

Շնորհաւորելով Միութեան անդամներին ու գործընկերներին 75ամեայ յորելեանի կապակցութեամբ՝ մաղթում եմ մշտանորոգ եռանդ ու կորով՝ այսուհետ եւս ծառայելու «Համազգային»ի հիմնադիրների նախանշած վեհ նպատակներին:

ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 113ԱՄԵԱԿ
Կը բանախօսեն՝
ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԸՆԿ. ԱԼՊԵՐՈՒ ԱՃԵՄԵԱՆ
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 11 Դեկտեմբեր 2003,
երեկոյեան ժամը 8:00ից,
«Յակոբ Տէր Մելիքոնեան» սրահին մէջ:

ապրած եւ ապրեցուցած են գեղարուեստական տարբեր ձեւերով: Ուրախութիւնը համընդհանուր է դիտողին եւ դերասանին եւ «Համազգային»ի հիմնական կեդրոններէն մէկը, ինչպէս նաեւ Հայաստանի համար, որուն հետ սերտ յարաբերութիւններ ծաւալած են:

Շար.՝ էջ 10

Հ. Բ. Ը. Մ. - ՄԵԻ ԳՈՐԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Ի ԲԵՐԱՆԱՆԻ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

Մենք՝ Հ. Բ. Ը. Մ. Միութեան Մեկուսեան կրթական Հաստատութեան Սանուց Միութեան անունով, կողմնակցութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմնակցական վարչական ժողովին, որ հրաժարի Մեկուսեան կրթական Հաստատութեանը ծախսերը - տեղափոխելու իր ծրագրերէն: Այս ծրագրերին վտանգը առաջին անգամ հանրութեան սեփականութեան դարձուց՝ Հ. Բ. Ը. Մ. Միութեան պատուով անդամ, նախկին փոխ նախագահ՝ պրն. Հայկազէն Ուզունեան:

Մեկուսեան Սանուցը եւ Միութեան կարգ մը մասնաճիւղեր կը կառավարէ, որ Հ. Բ. Ը. Մ. Միութեան տնտեսական ոչ բարեւոք վիճակէն է պատճառը հաստատութիւնը փակելու-տեղափոխելու ծրագրին, որուն համար կը փորձուի կերտել անդամներու միասնական կեցուածք ապահովել՝ ժողովի մը ընթացքին, որ տեղի պիտի ունենայ 2003 Դեկտեմբերի 15-ներուն: Վերամուտին Հ. Բ. Ը. Մ. Միութեան կողմնակց կողմէ կիրառու առաջարկած ամբողջական տնտեսագիտական գնահատումը Մեկուսեան կրթական Հաստատութեան հողատարածքին եւ միջամտութիւնները աշակերտական արձանագրութիւններուն, եկան շեշտելու այն մտաւարտութիւնը թէ կեդրոնը իր ծրագրերը գործադրելու վերջին փուլին մէջ կրնայ ըլլալ: Ատոնց վրայ թէ՛ անցնենք այն շղջակները, թէ՛ կեդրոնական ժողովը առաջարկներ ստացած է կիրառելու եւ ոչ կիրառելու գործարարներէ Մեկուսեանը գնելու քառասունութ միլիոն ամերիկեան տոլարի:

Հ. Բ. Ը. Մ. Միութեան կեդրոնական վարչական ժողովը յաճախ կը յայտարարէ, թէ Մեկուսեանը Միութեան ղեկավարած դպրոցներուն ամէնէն ծախսալիցն է: Բնական է, որովհետեւ, Մեկուսեանը՝ Հ. Բ. Ը. Մ. Միութեան եւ սփիւռքահայ երականութեան միակ գլխաւոր ղեկավարն է:

Մեկուսեան կրթական Հաստատութեան տարեկան պիւտճէն շուրջ 1,25 միլիոն տոլար է, երկու հարիւր աշակերտի վրայ: Իւրաքանչիւր աշակերտի տարեկան ծախսը՝ վեց հազար երկու հարիւր յիսուն ամ. տոլար (6250\$):

Կեդրոնը չի յիշեր բարեբար Մեկուսեան եղբայրներու Մեկուսեան Հաստատութեան ի պահ դրուած 5,5 միլիոն ամ. տոլարի գումարը, որուն տարեկան տոկոսը 200,000 ամ. տոլար է (մոտաւորապէս):

Հաստատութեան հողերուն վրայ շինուած շահութաբեր գոյգ առևտրական շէնքերը Մեկուսեանին կ'ապահովեն տարեկան շուրջ 400,000 \$:

Աշակերտներու թնշակներէն եւ այլ բարեփրական հաստատութիւններէն գոյացած ընդհանուր գումարը շուրջ 500,000 ամ. տոլար է:

Վերելի տուեալները նկատի առնելով, Մեկուսեան կրթական Հաստատութիւնը 100,000 ամ. տոլարի բաց մը կ'արձանագրէ, ինչ որ կարելի է դիւրութեամբ հաւատարակուել՝ օգտագործելով Հ. Բ. Ը. Մ. Միութեան եւ Մեկուսեան կրթական Հաստատութեան կարելիութիւնները:

Դպրոցն է, որ կը ձեւաւորէ ապագայ սերունդը: Այս էր, այս է եւ այս պէտք է մնայ Հ. Բ. Ը. Մ. Միութեան տեսիլը եւ աշխատանքը:

Եւ որպէս այլ, Հ. Բ. Ը. Մ. Միութիւնը դարձած է աւանդապահ՝ Մեկուսեան կրթական Հաստատութեան:

Փակել-տեղափոխել Մեկուսեան կրթական Հաստատութիւնը կը նշանակէ հրաժարիլ Միջին Արեւելքի հայութենէն: Փակել - տեղափոխել Մեկուսեան կրթական Հաստատութիւնը կ'աշխատէ Հ. Բ. Ը. Մ. Միութիւնը կը հրաժարի իր աւանդապահ առաքելութենէն:

Հետեւաբար՝ այս հողորդագրութիւնը կողմն է ուղղուած Հ. Բ. Ը. Մ. Միութեան կեդրոնական վարչական ժողովի անդամներուն, որպէսզի Մեկուսեանի ապագայի նկատմամբ առնուելիք որեւէ որոշում չվտանգէ Մեկուսեանի գոյատեւումը:

Միաժամանակ կողմն է Մեկուսեան ընտանիքի բոլոր անդամներուն եւ համայն հայութեան, որ հաւաքուին «Լուսոյ Տաճար»ի շուրջ, օգտակար դառնալու նիւթապէս եւ բարոյապէս, որպէսզի Մեկուսեանը շարունակէ իր առաքելութիւնը՝ բնավայրէն, սերունդէ սերունդ եւ դարէ ի դար:

Հ. Բ. Ը. Մ. - Մ. Կ. Հ. ԼԻԲԵՐԱՆԻ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Յովհաննէս Աշեան
Տիկին Մարի Աշեան
Տէր եւ տիկին Մեսրոպ եւ Հռիփսիմէ Սերոբեան եւ զաւակը՝ Հրայր

Տէր եւ տիկին Պետրոս եւ Լիզա Եսայեան
Տիկին Վարդուհի Էքիմեան եւ զաւակունք
Օրիորդներ Մէլրի եւ Տորթի Փափազեան
Տիկին Լուսին Փափազեան եւ դուստրը՝ Լին
Տէր եւ տիկին Քենէթ եւ Լորա Տին եւ զաւակունք
Թեոֆիլոսեան ընտանիք
Տէրտէրեան ընտանիք
Արզումանեան ընտանիք
Պաղտասարեան ընտանիք
Եսայեան ընտանիք
Սարգիսեան ընտանիք
Կապուտեան ընտանիք
Մարգարեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԻ (Ծնեալ՝ 1941ին)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Դեկտեմբերին, Նիւ Եորքի մէջ:

Հոգեւոյս սրբազանին վերջին օծման արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին, Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, ապա սրբազանին մարմինը փոխադրուեցաւ Անթիլիաս:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր Երկուշաբթի, 8 Դեկտեմբերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, առաւօտեան ժամը 11:00ին, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Կիլիկեան Ուխտի Միաբանութեան դամբարանին մէջ, Անթիլիասի Մայրավանքին ներս:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին վախճանեալից եղբոր՝ Յովհաննէս Աշեանի բնակարանը, Ժէլ Ել Տիպ, «Հաֆիզ Ապու Ժաուտե» շէնք, Բ. յարկ, "Jardin de Chine"ի կից, Երկուշաբթի 8, Երեքշաբթի 9 եւ Չորեքշաբթի 10 Դեկտեմբերին:

ՆԵՐՔԻՆ ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐ ԼԱՅՆԱԺԻՐ ԱՐՇԱԲ ՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ՊԵՔԱԱՅԻ ՄԵՋ

Ներքին ապահովութեան ուժեր շարաքաղաքի կատարած իրենց հետախույսական արշաւներու ընթացքին Պեքաաշի մէջ յայտնաբերեցին քարայր մը, որ կ'օգտագործուի իբրեւ թմրեցուցիչի պահեստի կեդրոն: Հոն գտնուող բոլոր իրերը յանձնուեցան թմրեցուցիչի դէմ պայքարող յատուկ զրահակազին:

Նշեալ ուժերը գրաւեցին նաեւ «Ճիփ» ինքնաշարժ մը, որուն տէրերը լքած էին պայն եւ փախուտ տուած, ինչպէս նաեւ գրաւեցին պէնքի եւ գնդացիներու կեդրոն մը:

Բանակայիններ տակաւին կը շարունակեն իրենց արշաւը գրաւելու համար Պեքաաշի մէջ գտնուող զանազան արգիլեալ իրերն ու նիւթերը:

Իր կարգին բանակի ընդհանուր հրամանատար պօր. Միշէլ Սիլվան այցելեց հիւսիսային Պեքաաշի բանակի կեդրոնները, որոնք կը գործադրեն ապահովական գործողութիւններ: Ան հսկեց բանակի բոլոր ջրկատներու աշխատանքին եւ տուաւ համապատասխան ցուցմունքներ:

Չօր. Սիլվան հանդիպում մը ունեցաւ սպաներուն հետ եւ դրուստեց անոնց առաքելութիւնը, շեշտելով զգաստ եւ պզուշ մնալու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ գործողութիւններու ժամանակ պահելու քաղաքացիին անվտանգութեան հանդէպ իրենց պատասխանատուութիւնը:

Չօր. Սիլվան այցելեց նաեւ Լիբանանի մէջ սուրիական ուժերու պատասխանատու պօր. Ռաբոն Ղապալէի, որուն հետ քննեց կատարուած գործողութիւններուն անարձանատուութիւնները:

Չօր. Սիլվան յարգանքով արտայայտուեցաւ Լիբանանի մէջ սուրիական ուժերուն մատուցած օժանդակութիւններուն մասին, ընդգծելով երկրին ապահովական վիճակը կայուն պահելու գործընթացին իրենց բերած աշխուժ դերակատարութիւնը, օրէնքի եւ հաստատութեան կան պետութեան ջանքերուն պօրակցութեան:

ՀԱՆԳԻՍ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԻ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կիլիկեան Ս. Աթոռոյ Միաբանութիւնը խոր վիշտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին՝

Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԻ (1941-2003)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Դեկտեմբերին, Նիւ Եորքի մէջ:

Հոգեւոյս սրբազանին վերջին օծման արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին, Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, Ապա սրբազանին մարմինը փոխադրուեցաւ Անթիլիաս:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 8 Դեկտեմբերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, առաւօտեան ժամը 11:00ին, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Կիլիկեան Ուխտի Միաբանութեան դամբարանին մէջ, Անթիլիասի Մայրավանքին ներս:

Մ. Ա. Ն. Օ. Թ. - Թաղման կարգէն ետք վեհափառ հայրապետը ցաւակցութիւններ պիտի ընդունի վեհաբանի դահլիճին մէջ:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱՅՈՒՄԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԴՈՐՈՂՈՒՄ

Շրջանային Լեռնալիբանանի սեփականատիրացման ցանկանակ յանձնախումբը, Պուրճ Համուտի ընդարձակ տիրութեան պահանջին եւ 51/4842, 74/7266 եւ 2002/8919 հրամանագիրներուն հիման վրայ հետեւեալ անձերուն կը տեղեկացնէ.

Կալուածի սեփականատիրոջ անունը	Կալուածի թիւը	որոշումի թիւը	հատուցումի գինը
Կալուածներու յատուկ ձամբայ 477, 2269 եւ 2275 Պուրճ Համուտ	2268՝ Պուրճ Համուտ	656/2003	Ոչ մէկ հատուցում
Շաւաար՝ թիւ 2275 կալուածի մէջ գտնուող բոլոր տարրեր իրաւունքներուն միջեւ	1/ 2275՝ Պուրճ Համուտ	657/2003	Ոչ մէկ հատուցում
Ալեքսանտրա Փոլիսիոսի Սիարիս (Փոլիսիոսի Տիմոթիոսի կինը)	1087 Պուրճ Համուտ	658/2003	800 հազար Լ. Լ.
Էլիէ Էլիաս Ղանժ Ֆատի Էլիաս Շաքբուր Էլիաս Շաքբուր	4869՝ Պուրճ Համուտ	660/2003	16,200 հազար Լ. Լ.
Թուլիէ եւ Լեոնիկ Սիիրան Սկրեան	1598՝ Պուրճ Համուտ	671/2003	13,650 հազար Լ. Լ.

Պետք է նշել, որ վերաբնութեան պայմանագրով 30 օր է, այս հաղորդումի քուականցն ետք:

ՀԻՒՍՍԱՅԻՆ ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱՅՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՏԱԽԱՉ ԺԱՆ ՖԱԿՏ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ԺԸՆԵԻ

Նախագահական պալատի ընդհանուր տնօրէնութիւնը երէկ հրապարակեց պալատական հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ նախագահ գօր. Էմիլ Լահուտի այսօր կը մեկնի Ժընեւ նախագահելով լիբանանեան պատուիրակութիւնը, որ պիտի մասնակցի համակարգչային արհեստագիտութեան համաշխարհային խորհրդաժողովին, որ տեղի պիտի ունենայ 8 Դեկտեմբերէն մինչեւ 12 Դեկտեմբեր: Նշեց, որ համակարգչային արհեստագիտութեան յատուկ համաշխարհային խորհրդաժողովը Ժընեւի մէջ տեղի կ'ունենայ ՄԱԿի հրահանգով եւ գործակցութեամբ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին:

Միւս կողմէ, ՄԱԿի ընդհանուր ժողովը օրէնքի թիւ 56 բանաձեւին մէջ որոշած է խորհրդաժողովին ընդհանուր շրջագիծը, նշելով նաեւ ՄԱԿի պատասխանատուութիւնը այս խորհրդաժողովին կազմակերպման եւ ապա անոր որդեգրած որոշումներուն գործադրութեան առնչութեամբ:

Խորհրդաժողովին պիտի մասնակցին ամբողջ աշխարհէն ժամանած երկիրներու ղեկավարներ, պետական պաշտօնատարներ եւ բարձրաստիճան անձնաւորութիւններ: Նախագահ Լահուտի պիտի ընկերակցի Լիբանանի առաջին տիկին Անտրէ Լահուտի, փոխ վարչապետ Իսմայիլ Մարէս, առեւտուրի եւ տնտեսութեան նախարար Մարտին Համատէ, հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Մարտին Միքայիլ Միքայիլ, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քորտաշի, ինչեւ վարչական բարեկարգումներու պետական նախարար Քարոմ Բազարտուճի, ինչեւ նաեւ Ֆրանսայի երկիրներու կազմակերպութեան մէջ նախագահ Լահուտի սեփական ներկայացուցիչ տղթ. Շարլ Ռոզբ, արտաքին գործեր նախարարութեան եւ ՄԱԿի ընդհանուր բարտուղար Նաժի Ապի Ապի, միջազգային կազմակերպութեան եւ լրագրողի մէջ Լիբանանի ներկայացուցիչ Ժալարան Սուֆան, խմբագիրներու եւ լրագրողի ներու սենտիբաներու նախագահներ Սըլէմ Քարամ եւ Մոհամէտ Պապալէքի:

«ՆԻՈՒ ԹԻ. ՎԻ.»Ի ՏՆՕՐԷՆ ԽԱՅՅԱԹ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱԻ

Չինուորական դատախաչութեան գերագոյն ատեանին որոշումով անցեալ շաբաթվերջին լիբանանեան բանակը ձերբակալեց պատկերասփիւռի «Նիու Թի Վի» կայանի տնօրէն Թահապի Սալայթ, որուն փոխադրեց Եարվէ՝ պաշտպանութեան նախարարութեան մէջ հարցաքննելու համար պայն: Նշեց, որ Սալայթ ձերբակալուած է Իսրայիլի հետ գործակցութեան, ինչպէս նաեւ կարգ մը արաբական երկիրներու վնաս հասցնելու մեղադրանքով:

Բանակայիններ Շաբաթ կէսօրէ ետք խումած էին պատկերասփիւռի «Նիու Թի Վի» կայանը ձերբակալելու համար Սալայթը, սակայն որովհետեւ ան հոն չէր գտնուեր, բանակայինները ուղղուեցան անոր բնակարանը եւ ձերբակալեցին ինքը:

Ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուժ հերքեց թէ ձերբակալութեան վիճիք իր կողմէ տրուած է, եւ դիտել տուաւ, որ ան կը վերադրուի փինուորական դատախաչութեան գերագոյն ատեանի ընդհանուր դատախաչ Ժան Ֆահտի: Երէկ երեկոյեան Սալայթ պալատ արձակուեցաւ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ...

Շարունակուած Ա. ԷջէԳ

ւած զանազան մարզերէ ներս, յատկապէս համաարաբական միասնակամութեան ձախտի կերտումի ծիրէն ներս:
Շուրջ մէկուկէս ժամուան հանդիպումին ընթացքին, նախագահ Լահուտը որոշուեց նախագահ Պոթաֆիլիքայի դերակատարութիւնը Լիբանան - Ալճերիա յարաբերութիւններու ամրապնդման մէջ, յիշելով նաեւ անոր բերած աշխուժ մասնակցութիւնը Լիբանանի մէջ կայացած Պէրլորի Սրաբական Վեհաժողովին, ինչպէս նաեւ Պէրլորի մէջ կայացած Ֆրանսայի Տրիկիրներու կազմակերպութեան 9րդ վեհաժողովին:

ՄԱՀԱԶԴ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Դամասկոս Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն Դամասկոս կը գուժեն ազգային բարեբար՝ ԲԻԻԶԱՆ Դ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Վիթթորիա Եագուպեան
Տէր եւ տիկին Րաֆֆի Եագուպեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Նազարէթ Եագուպեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արա Եագուպեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Շահէ Եագուպեան եւ զաւակունք
Տիկին Մաքրուհի Գալայեան եւ դուստրը
Տիկին Փերուզ Եագուպեան եւ զաւակունք
Տիկին Մարի Ուրլաբեան եւ զաւակունք
Տիկին Նելի Եագուպեան եւ զաւակունք
Տիկին Ժորժէթ Եագուպեան եւ զաւակունք
Յակոբ Եագուպեանի դստերը
Տիկին Ազնիւ Ոսկեան եւ զաւակունք
Կարապետ Փարթամեանի զաւակները
Տիկին Լուսին Փարթամեան եւ զաւակունք
Տիկին Մարի-Լուիզ Եագուպեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գառնիկ Եագուպեան եւ զաւակունք
Եագուպեան ընտանիք, Նաճարեան ընտանիք, Գալայեան ընտանիք, Ուրլաբեան ընտանիք, Սեմերեան ընտանիք, Տարուիչ ընտանիք, Սուվալեան ընտանիք, Գալայեան ընտանիք, Ոսկեան ընտանիք, Փարթամեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մոռուսոյն, Տօր, աներձօր, մեծ Տօր, եղբոր եւ հարազատին՝

ԲԻԻԶԱՆ Դ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 8 Դեկտեմբեր 2003, ժամը 11:30ին, Ս. Մարգրիտ Եկեղեցւոյ մէջ, Պապ Շարքի Դամասկոս:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Հ.Բ.Ը.Միութեան «Նազարէթ Եագուպեան» ակումբին մէջ, Երեկոյեան ժամը 6:00-9:00, Երեքշաբթի 9, Չորեքշաբթի 10 եւ Հինգշաբթի 11 Դեկտեմբերին:

«ԱՆՍԻԱԼ ԳՐԵՆՔ»Ը ԻՐ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԽՄԲԵՑ ՀԱՐԻՒՐԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հայ գիրն ու գիրքը ընդ որ հայ մանուկներուն մտերիմը դարձրին առաքելություն մէջ «Այդակ»-ի «Պատիկ - Մպտիկ»

աշակերտներ խանդավառութեամբ հաւաքուած էին «Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահ՝ իրենց մասնակցութիւնը բերելու

130 աշակերտներ, իսկ ժամը 5:00ին՝ ճորդասարանի 140 աշակերտներ անպատրաստից կերպով գրեցին իւրաքանչիւր դասարանի կերպով

զայն անսխալ կերպով գրելու ճիշդ, որ յուսադրիչ երեւոյթ է: Իւրաքանչիւր դասարանի ուղղադրութեան մրցումին ասարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Մասնակցող աշակերտները ստացան յուշանուէրներ՝ իւրաքանչիւր դասարանի տարիքային մակարդակի համապատասխան գիրք, ինչպէս նաեւ՝ «Պատիկ - Մպտիկ»-ի փակցնելիքներ ու գծաքաշներ:



Չորրորդ դասարանի մասնակիցներ Ashnag



Հինգերորդ դասարանի մասնակիցներ Ashnag



Վեցերորդ դասարանի մասնակիցներ Ashnag

մանկապատանեկան յարեւումը յաջորդաբար երկրորդ տարին ընթացող մեծ յաջողութեամբ իրականացուց մեր իրականութեան մէջ եպակի նախաձեռնութիւն մը՝ մանուկներու յատուկ ուղղադրութեան «Անսխալ գրենք» մրցումը: Երէկ, 4 իրակի, 7 Դեկտեմբերի երեկոյեան հարիւրաւոր

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ «ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՈՒ ԱՆԹԻԼԻԱՍ

ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ
Արցախի վաստակաշատ գեղանկարիչ ՍԱՍՈՒԷԼ ՉԱՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ

Հովանաւորութեամբ՝ **ՊՈՒՐԸ ՀԱՍՈՒՏԻ ԵՂՂԱՍՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

Բացում՝ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան-Շ. Ս. Ը. Ս.» Մարզաշակութային Համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

Ցուցահանդէսը կը շարունակուի 13 եւ 14 Դեկտեմբերին, առաւօտեան ժամը 11:00էն երեկոյեան ժամը 9:00:

ԵՆՆՕԹ.- Այս ձեռնարկին ամբողջ հատոյթը կը տրամադրուի Արցախի ֆոնտին: **ՇՐԱԵՐ**

ԾԱԽՈՒ ՇՔԵՂ ԶԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ
●Անթիլիաս - Սպիտի սկիզբ: Ըեռ. 04-523926:

Նշենք, որ մրցումը տեղի ունեցաւ գործակցութեամբ Մեսրոպեան վարժարանի տնօրէնութեան եւ անձնակազմին, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին սոյն ձեռնարկին յաջողութեան ի խնդիր:

«Անսխալ գրենք»-ի արդիւնքները պիտի յայտարարուին «Պատիկ - Մպտիկ»-ի յաջորդ թիւով, որ լոյս պիտի տեսնէ Ուրբաթ, 19 Դեկտեմբերին: Իւրաքանչիւր դասարանի ուղղադրութիւնը անսխալ գրող աշակերտները պիտի ստանան արժէքաւոր նուէրներ:

2007 ԴԱՐՈՒ ԸԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՐՈՒԺԱՆ ՍԵԹԵԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ

Վերջերս մահացած լիբանանահայ ակադեմիկոս արւեստագէտ, լուսանկարիչ Վարուժան Մէթեանի յիշատակին ձօնուած նախաձեռնութեամբ մը Համազգայինի Լիբանանի Երջանային Վարչութիւնը կը նշէ նաեւ իր հիմնադրութեան 75ամեակը: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին հովանաւորութիւնը վայելող ցուցահանդէսով մը անգամ մը եւս հանրութեան կը մատուցուին արուեստագէտին նշանաւոր դիմանկարներէն ընտրանի մը, որ կը ներկայացնէ 20րդ դարու Հայ մտաւորականները: Ցուցահանդէսին րացումը, որուն ներկայ էին մեծ թիւով Հայ թէ՛ օտար արուեստագէտներ, տեղի ունեցաւ Ուրբաթ, 5 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:00ին, Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ:



Ashnag

Համազգայինի Լիբանանի Երջանային Վարչութեան անունով բարի գալուստի խօսք արտասանեց Կարօ Թագլորեան, որ ըսաւ, թէ այս ցուցահանդէսը կը բանայ Համազգայինի հիմնադրութեան 75ամեակը տօնող ձեռնարկներու եւ նախաձեռնութիւններու շարքը: «Այս ցուցահանդէսով Համազգայինի Լիբանանի Երջանային Վարչութիւնը կը ձգտի հաղորդել կենդանի պատգամներ՝ Վարուժանի ոսպնեակով դիտուած», աւելցուց ան: Ապա խօսք առաւ Արամ Ա. կաթողիկոս, որ ոգեկոչելով Վարուժան Մէթեանի յիշատակը, ըսաւ. «Մեզմէ հեռացած Վարուժան Մէթեանը կը խօսի իր արուեստով՝ լուսանկարներով, գորս կ'իրականացնէր բացառիկ խտապահանջութեամբ՝ իր արուեստին պիտանակէն դիտելով կեանքը եւ թափանցելով երեւոյթներուն ու անտեսանելիին խորքը»: Վեհափառը իր հայերէնով եւ Ֆրանսերէնով խօսքին մէջ շեշտեց, թէ Վարուժան Մէթեան, ըլլալով էպիկոս հայ արուեստագէտ մը, եղաւ նաեւ ամբողջութեամբ լիբանանցի, ինքզինքը նոյնացուց երկրին հետ եւ ստեղծեց «Վարուժանի մայրիկ»: Իր խօսքին աւարտին, Արամ Ա. կաթողիկոս բարձրորէն գնահատեց Համազգայինի Լիբանանի Երջանային Վարչութիւնը, որ մեր կեանքին մէջ կը շարունակէ վառ պահել մշակութիւնը: Վարուժան Մէթեանի ոսպնեակը կանգ առած է 20րդ դարու երէց թէ՛ կրտսեր սերունդի հարեանի թէ՛ սփիւռքահայ բազմաթիւ գրողներու, նկարիչներու, բեմադրիչներու, խմբավարներու եւ ազգային գործիչներու վրայ, ուր աւելի քան քառասուն դիմանկարներէ կը բաղկանայ այս ցուցահանդէսը: Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ Երեքշաբթի, 9 Դեկտեմբեր: Զայն կարելի է այցելել առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

21" + VCR \$ 319
TC-21PS70R: 21" TV, Flat, Stereo + NV-MV20: 2-Head VCR

25" + DVD \$ 499
TC-25PS70R: 25" TV, Flat, Stereo + DVD-S35: Slim DVD, Multi Format

21" + VCR \$ 339
TC-21PS75R: 21" TV, Flat, Stereo, Subwoofer + NV-MV20: 2-Head VCR

29" + DVD \$ 599
TC-29PS70R: 29" TV, Flat, Stereo + DVD-S35: Slim DVD, Multi Format

Digital Video Camera \$ 549
NV-DS60

\$ 689
NV-DS65 With SD Card

FREE 5 TAPES + CASE

DVD Home Theater System \$ 629
SC-HT900: 5 Disc Changer, 600W, Multi Format

FREE DVD

From November 1st till December 31st, 2003 - As long as supplies last (All prices include VAT)
من 1 تشرين الثاني لغاية 31 كانون الأول, 2003 - العرض بسري لحين نفذ الكمية (الأشعار تشمل مصرية القيمة المضافة)

Panasonic ideas for life

Հոգաւորութեամբ՝ **ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**
(Առաջատար Լիբանան Հայոց Թատր)

Նախագաւորութեամբ՝ **ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂՂԱՅՐՆԵՐՈՒ**
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ - ԿԱԾԱՌՔ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ
Լոսանջիտի ԼԵՒՈՆ ԹԱՇՏԵԱՆ

Հասոյթը պիտի տրամադրուի «Ազգակ»-ին


Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԲԱԼԵԱՆ-Շ.Ս.Ը.Ս.» մարզաշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ: **ՀՐԱԵՐ**

Ծանօթ - Ցուցահանդէսը պիտի շարունակուի Եւրբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ կար ժամը 4:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00

ՎԱՐՉՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ
Մրուժ, 2 ընդասնեակ, հիւրասրահ եւ յարակից մասեր: Ըեռ. 03-493155:

Մշակութային Էջ

«ԱՒԵԼԻ ԼԱՒ Է ԼՈՒՍԱՒՈՐԵԼ, ՔԱՆ ԹԷ ՓԱՅԼԻԼ ԱՌԱՆՁԻՆՆ...»



Երեւակայութիւնը: Այս խումբը քով-քովի գալով թէ՛ զիրար կը քաջալերեն, թէ՛ կը «պաշտպանեն», եւ մանաւանդ՝ կը սորվին իրարմէ:

Անոնց ընթացքը շատ յստակ է ու մեկին. «Աւելի լաւ է լուսաւորել, քան թէ փայլիլ առանձինն»: Նման միութիւններ ու խմբակները մենք կազմուած են անցեալին եւ այսօր այդպէս գոյութիւն ունին Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ: Կարծէք թէ այս մէկը անհրաժեշտութիւն մըն է մեզի համար, եւ արդիւնք՝ մեր ցիրուցան ճակատագիրին: Այս խմբակը, որուն անդամները շատ աւելին են, քան՝ ցուցահանդէսին մասնակիցները:

Կազմակերպութեամբ Լիբանանի հայ երիտասարդներու ակումբին եւ հովանաւորութեամբ մշակութի եւ բարձրագոյն կրթութեան նախարար Զարի Արիտիի, խմբային գեղանկարչական ցուցահանդէսի մը բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 5 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:00ին, ԵՌԻՆԵՍՔՕԻ պալատին մէջ, Պէյրուս:

Լիբանանի հայ երիտասարդներու ակումբը ծնունդ առած է երկու տարի առաջ, եւ անոր անդամներէն 6 գեղանկարիչներ մասնակցած են 2001ին կազմակերպուած «Էքսփո Պէյրուս» ջութակահարչութիւնին: Այս մէկը անոնց երկրորդ ձեռնարկն է, որուն կը մասնակցին 9 գեղանկարիչ-գեղանկարչուհիներ՝ Ժամէթ Յակոբեան, Քրիսթին Պայրամեան, Սիւզի Չաքրեան, Գոգօ Արփաճեան, Վարդան Խաչատրեան, Մարիա Պոյաճեան, Ռազմիկ Պէրթիզեան, Մարկարիթ Խաչատրեան եւ Անիթա Թուրքիկեան: Ցուցադրութեան զրուած են շուրջ յիսուս ստեղծագործութիւններ, իրագործուած՝ ջրաներկով, իւղաներկով, մատիտով եւ կաւճաներկով: Ցուցահանդէսը ոճային եւ թեմատիք առումով խայտարազ տպուկ մը կը պարզէ, դասակարգութեան ու տպաւորապաշտու-

նակցող արուեստագէտները բոլորն ալ ստացած են մասնագիտական կրթութիւն. չորսը Հայրենիքի, իսկ մնացեալները՝ Լիբանանի տարբեր ուսումնարաններու եւ հա-



մայսարաններու մէջ: Անոնք (առաւել կամ նուազ չափով) բոլորն ալ օժտուած են երփնագրելու կարողականութեամբ, թէ-

ճամբայ ելած է ստեղծագործելու եւ ցուցադրուելու համար: Մեզի կը մնայ աջակցիլ անոնց եւ քաջալերել թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս: Այսօր մանաւանդ չափազանց դժուար է դիմանալ եւ մտաք գործել միջազգային արուեստի շուկաներուն մէջ: Այս ուղղութեամբ մրցապայքարը թէ՛ է եւ սաստիկ: Կասկած չունինք, որ այսօր Լիբանանի մէջ կան երիտասարդներ, որոնք իրենց տաղանդով եւ ուրոյն արտայայտչաձեւերով չեն գիշեր միջազգային շուկաներուն: Սակայն կը կասկածինք, որ անոնք կարենան հասնիլ միւսներուն մակարդակին եւ տիրանան միջազգային հռչակի: Նոյնը կը պատահի նաեւ արուեստի այլ մարզերուն մէջ: Քանի մը լիբանանահայ երիտասարդ երաժիշտներ հաջիւ սկսան միջազգային մրցանակներ ստանալ, յանկարծ անոնց անունը սկսաւ չիլուելի ու մոռցուիլ:

Այս առիթով կ'ուզենք ընդգծել, թէ՛ Այո՛, ազգային եւ նոյնիսկ պետական քաղաքականութիւնն եւ հոգատարութիւն պէտք է մեր մշակութիւնը լուսապէս, տեղին եւ ժամանակին ներկայացնելու համար միջազգային բեմերու վրայ եւ ցուցահանդէսներու մէջ:

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՈՒԱԾ ՅԵՂԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդային շրջանին հայրենի հայրենասեր մտաւորականները շատ էին, սակայն անոնց մէջ խիզախներն ու յանդուգները՝ քիչ: Իսկ անոնցմէ ոմանք այնքան առաջ անցան, որ վտանգեցին նոյնիսկ իրենց կեանքը եւ խորհրդաւոր պայմաններու մէջ մահացան, ինչպէս, օրինակ՝ Պարոյր Սեւակ, Սիմա Աւետիսեան եւ Մուշեղ Գալշոյեան: Այս վերջինի խիզախ արտայայտութիւններն մէկը «Այսպէս կոչուած ցեղապաշտութեան մասին» յօդուածն էր, որմէ հատուած մը կ'արտատպենք ստորեւ:

Որտե՞ղ որոնել «Նացիոնալիզմ»ը: Ցեղապաշտութիւնը: Ժողովրդի ո՞ր խաւի մէջ: Ո՞ր շերտում: Որտե՞ղ է բոյն դրել: Որտե՞ղ որոնել: Արուեստի՞ մէջ, գրականութեան՞ մէջ... Դրանք կեանքից են գալիս, իրականութիւնից, որտեղ այդպիսի երեւոյթ չկայ: Պատմագրութեան՞ մէջ: Որտե՞ղ որոնել:

Գաղափարական, դատարարական բնագաւառի որոշ ապաշնորհների աշխատանքային ծրագրերում:

Եւ ամենացաւալին այն է, որ երբեւէ նրանցից ոչ մէկի համոզմունքը չի եղել, թէ Հայաստանում ցեղապաշտութիւնը գոլուխ է բարձրացրել՝ դրսեւորում է այս կամ այն ձևով: Պարզապէս գործելակերպ՝ նացիոնալիզմ բառը ունի պէս պայթեցնելու ահաբեկչու մարդկանց, կոծկելու իրենց ապաշնորհութիւնն ու անճարակութիւնը, պատրանք ստեղծելու, թէ գործ է արւում, անչառ ու անթերի կատարւում են գաղափարական դեկավարի պարտականութիւնները: Եւ քանի որ վերը թուարկած ոլորտներում գործելը, մարդկանց բարոյական բարձր չափանիշներով, կուսակցութեան ու կառավարութեան յստակ պահանջներին համապատասխան դատարարելը շատ աւելի դժուար գործ է՝ մեծ ներուժ ու եռանդ, ճկունութիւն, ազնուութիւն ու մեծ հաւատ պահանջող, քան նացիոնալիզմ յայտնաբերելը, ապա կարելի է նայել շուրջըրըրը եւ մատը տնկել:

Ահա, համայնավար պատմաբանը Հայ Եղեռնի եւ ընդհանրապէս հայոց պատմութիւն է գրել՝ ուրեմն Հայաստանում նացիոնալիզմը գոլուխ է բարձրացրել:

Ահա, արխիւային վարչութեան կողմից հրատարակուած «Անդրանիկ» ժողովածուն՝ նացիոնալիստական դրսեւորում է: Եւ պատմական փաստաթղթերի այդ ժողովածուն (որը ունէր շատ հեղինակաւոր խմբագրական կազմ եւ բոլորը համաձայն էին տպագրութեան) 5 - 6 տարի հրատարակութեան դարակներում պահուելուց յետոյ վերադարձուեց արխիւային վարչութեանը:

Ահա, Ուլանում գորավար Անդրանիկի արձանն են կանգնեցնում. Հայաստանում նացիոնալիզմը գոլուխ է բարձրացրել... ովքեր են մասնակցում արձանի բացմանը, ով ասաց, Անդրանիկ գորավար, ես քո ցաւը տանեմ, ես քո աջը համբուրեմ: - Ծտապ, գիշերով շրջվում արտահերթ բիւրօ հրաւիրել՝ ներկայացում կազմակերպել:

Ահա եւ քեզ գաղափարական աշխատանքի մեթոտ-ժողովրդի կողմից մեծ մի մարդու նկատմամբ դրսեւորած սէրն ու համակրանքը որակել որպէս նացիոնալիստական տրամադրութեան արտայայտութիւն:

Անտուն եւ անօթեւան հայրուկի պատուին, ազատութեան մեծ մարտիկի պատուին օտարներ են յուշարձաններ կանգնեցրել Պուրթուլում, Սոֆիայում, Առաջույում եւ այլուր, իսկ իր հայրենիքում մի ինքնուրուի ձեռքով պատրաստուած արձանիկը այդպէս յուզեց:

Այնուհանդերձ, հայ ազատագրական շարժման հերոսներից, հայրուկներից ամենաբարխաւուրը եւ կը համարէի Անդրանիկին. որովհետեւ ինչ-որ տեղ նա պետական-պաշտօնական ընդունելութեան արժանացաւ... Իսկ մեծանուն միւս հայրուկները:

Տասնամեակներ են անցել, բայց մեր պատմագրութիւնը չի ճշդել իր դիրքը. առայժմ առկայ է ոչ տրամաբանական մի իրողութիւնը ազատագրական շարժումն ընդունել, իսկ շարժման մասնակիցներից, հերոսներից՝ նայած ում: Եւ դա միայն այն պատճառով, որ երբեւէ դաշնակցական կուսակցութեան մի քանի գործիչներ գնացին իրենց անունները կապելու շարժման դեկավարների, հերոսների անունը հետ:

Գէորգ Չաւուշը այրեց ընդամենը 37 տարի, որից 20ը նրա եւ Ֆիտայիների լեզուով ասած՝ պատուած էր գէնքի հետ, կուսեց սուլթանի դուռնից Դէմ, յանուն արդարութեան ընդհանրապէս, յանուն իր ժողովրդի պատուի ու ազատութեան: Եւ իր կենդանութեան օրօք դարձաւ առասպել. ժողովրդի մէջ լուրեր էին պտտւում, որ նա երկնային է՝ անիտցելի: Գէորգը սուլթանական բարբարոս բռնուցքի տակ ճգմուող ժողովրդի ազատութեան շունչն էր, որ թափառում էր լեռներում, Գէորգը ժողովրդի ապրելու եւ յարատեւելու յոյսն էր: Նրա մասին երգեր էին յօրինւում, էպոս էր հիւսւում:

Աշնակ գիւղում ապրում են Գէորգ Չաւուշի ազգակիցները: Մի քանի տարի առաջ նրանք սկսեցին նոր բնակարանի շինարարութիւնը եւ, առիթ էր, որոշեցին շինութեան պատերից մէկի մէջ կանգնեցնել իրենց մեծ տոհմակցի արձանը:

Ահա եւ նոր գլխացաւանք՝ կանգնեցում է Գէորգ Չաւուշի արձանը: Եւ ապա՝ Գէորգ Չաւուշի անունը հետ առնչուող չէնք ինչ-որ տարօրինակ տեսք ունի: Ով տեսել է այդ կիսակառուցը, գիտի՝ շինութիւնը ինչդուր է հարեւան տներին արանքում եւ որոշ չուք տարւո նպատակով տէրեր որոշել էին շինութեան կտուրին, անկիւնի հետ բարձրացնել մի քանի մեթր տուֆակերտ աշտարակ: Արտաքին ձեւ, էֆեկտ եւ ուրիշ ոչինչ: Ո՛չ մի խորհրդանշան: Բայց, այնուամենայնիւ, մարդիկ իրենց պարտքը համարեցին միջամտել՝

տան տէրերին կարգադրեցին քանդել աշտարակը: Եւ երեք-չորս տարի շինութեան տէրերը իրաւունք չունեցան աւարտելու կիսատ աշտարակը:

Եւ փառք Աստուծոյ, որ անցեալ ամրանը նրանք այդ իրաւունքն ու հնարաւորութիւնը ունեցան:

Հայ ազատագրական շարժումը հնարաւոր չէ առանձին դիտել, դա նոյն բռնութեան ու դաժանութեան դէմ սլաւոնական երկրներում գոլուխ բարձրացրած շարժման մի օղակ էր: Իսկ, ահա Եռեկոսյալիւսում, Պուլկարիայում, Ռումանիայում, այլուր արձաններ են կանգնեցնում, հայրուկների մասին վէպեր են սպում, շարժապատկերներ են բարձրացնում պատառ, սակայն մեզ մօտ այսպիսին է գնահատականը:

Ո՞ր կուսակցութեան են պատկանել երկոսյալ, պուլկարացի, ռումանացի հայրուկները: Ո՞ր կուսակցութեանն է պատկանել Անդրանիկը, Գէորգ Չաւուշը եւ միւս բոլորը: Մէկ եւ նոյն կուսակցութեան՝ Ազատութեան եւ Արդարութեան:

Բայց եւ այնպէս էն գլխին միանգամայն սխալ դիրքորոշում եղաւ:

Բոլոր հայրուկները, որ դիմադիր էին կանգնել սուլթանի դիմի, երիտթուրքերի բարբարոս բռնութեանը, բոլոր նրանք, ովքեր գէնքի էին դիմել յանուն ազատութեան, յանուն իրենց կանանց եւ աղջիկների պատուի, եւ վերջապէս՝ յանուն ժողովրդի ֆիզիքական գոյութեան, զիններից ձեռք բռնած, պատուախնդիր այդ այլերը հուշակուցիկ որպէս ժողովրդի թշնամի, դասակարգային թշնամի: Այդպէս որակեցին եւ դաժան դատաստան տեսան նրանց հետ: Հալածուեցին, աքսորուեցին, սպանուեցին, մի մարդ անցաւ արտասահման: Նրանցից մէկը՝ Չուրն, չղիմացաւ արտասահմանում: Մի անկանտեսի յուշերում գրուած է. - Չուրն, թքոտելով թափառում էր Փարիզի փողոցներով, ասում էր՝ է՞ս էր Եւրոպան, որի անունով մեզ այդքան խաբեցին... Ես կը վերադառնամ Հայաստան, թող ինձ սպանեն, գոնէ իմ արեւը պարտատանիւթ կը դառնայ ծաղիկներին: Եւ այդպէս էլ եղաւ:

Իսկ ինչի՞ յանգեցրեց նորաստեղծ հանրապետութեան գաղափարախօսներից ոմանց մոլեռանդ քաղաքականութիւնը: Ցանկեցրեց տխուր այն իրողութիւնը, որ դաշնակցականները տէր գործն են հայրուկներին, որոնք իրենց նրանց: Աշխարհի այս ու այն անկիւններում իրենց ճակատագիրը ողբացող դաշնակցական գործիչները, որոնք չզիտէին, թէ ովքեր են իրենք, ինչո՞ւ պէտք է գրադուեն, յանկարծ աշխուժացան: Եթէ խորհրդային Հայաստանում ֆիտայական շարժումն ու նրա հերոսները մերժուած են, ուրեմն տէրը մենք ենք: Մենք ենք կազմակերպել այդ շարժումը, մենք ենք ծնել այդ հերոսներին: Ահա եւ ապրելու, շնչելու, գալիք սերունդների, պատմութեան առջեւ արգարանայու... արդարանալու իրաւունք: Եւ, յետմահու, բոլոր հայրուկների ընդունեցին դաշնակցական կուսակցութեան անդամ եւ սկսեցին ազատագրական շարժման պատմութիւնը գրել: Հայրուկների մասին սկսեցին յուշեր գրել, եւ ամէն մէկին իր անձը կապեց նրանց անունը հետ:

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի ժողովուրդի գաւակներուն կ'ուզենք յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուներու իրավիճակը կարգաւորել եւ բարեկարգել:

Այս ծրագրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը:

Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անունը եւ կամ հետո բարեկամի մը անունը (բայց իրենց ըզվ պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցու թաղականութեան գրասենեակը ներկայացնալ ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել:

- 1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճենը:
- 2.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան իխրաժ քայտ լուսապատճենը:
- 3.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւաստիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան իխրաժ քայտ, հասցեն եւ հեռաձայնի թիւերը:
- 4.- Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւը, Եւսամակ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:
- 5.- Կարելի եղած չափով արձանագրել տուեալ դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները:

ԾԱՆՕԹ.- Կը խնդրուի արտասահմանի թերթերէն՝ արտատպել:

ԴԻՄԱՆ ԱՉԱՍՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգային» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգային» ծանուցումներու գրասենեակը:

Նորաստի Նորաստի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿԱՆ

ՄԻՆՉ ՖՐԱՆՍԱ ԿԸ ՓՈՐՁԷ ԵՐԿՐԻՆ ԻՍԼԱՄԵՐԸ ԶՈՒԵԼ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԱՆՈՆՔ ԱԲԵԼԻ ԱՍՈՒՐ ԿԵՐՊՈՎ ԿԸ ԿԱՌՉԻՆ ԻՐԵՆՑ ԻՆՔԼՈՒԹԵԱՆ: «Ա. ԷՖ. ՓԵ.», «ՏԸ ՆԻՒ ԵՈՐԸ ԹԱՅԱՋ» ԵՒ «ԻՆԹԵՐՆԵՏԸՆԸԸ ԵՐՈՐԸՏ ԹՐԻՊՈՒՆ» ԿԸ ԳՐԵՆ.

ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵՒՄՈՒՏՔ

«ՃԵԶԻՐԸ»Ի ԼՐԱԳՐՈՂՐ ԿՈՐԴԵԳՐԸ ԼԱԶԱԿ



Խառնիժա պարհ Կանոնա անցալիմ եւ այսօր:

Արաբական «Ճեզիրէ» կայանին հռչակագրեր լրագրողներէն՝ Նատիժա պարհ Կանոնա վերջերս պատկերասփռուի պատասխան վրայ երեւցաւ մովթ նարնջագոյն իսլամական լաչակով:

«Պ. Պ. Մ.», որ կը հաղորդէ լուրը, կը նշէ, թէ երեւոյթը ստեղծած է բուռն հակադեմոկրատիկ մը եւ կայանը հեռաձայններու հեղեղ մը ստացած է աշխարհի տարբեր կողմերէն:

Ալճերիացի հռչակաւոր խօսնակուհին Ֆիթ-րի սոնէն մէկ օր առաջ որոշած է յայտարարել լաչակ դնել: Ան յայտարարած է, թէ յաջողած է «պարտութեան մատնել սատանան», երբ տարի մտածելէ ետք լաչակ դնելու գաղափարին մասին: Ան կը նշէ, թէ կայանին պատասխանատուները ոչ մէկ ճնշումի տակ դրած են զինք:

Կայանին պատասխանատուները կը հաւատան, թէ լաչակ դնելը անձնական հարց մըն է, եւ թէ՛ միայն արհեստավարժ մտեցումով կարելի է արժեւորել զայն, կ'ըսէ ան:

Պրն Կանոնա երկու տարի առաջ լաչակով պատկերասփռուելու փորձ մը կատարած է, սակայն տատամած է լաչակը որդեգրելու պատասխան վրայ:

Ան կ'ըսէ, թէ վճռորոշ պահը հասած է, երբ լսած է եգիպտացի իսլամ քարոզիչ Օմար Ապտուլ Ֆաֆիի խօսքերը «Ճեզիրէ» կայանին մէկ յայտագիրէն: Քարոզիչը կոչ կ'ուղղէր իսլամական շարիայի օրէնքը կիրարկելու եւ իսլամական կենցաղին հաւատարիմ մնալու:

Նոյն ժամանակ կէսերուն «Ճեզիրէ» ունեցաւ տնօրէններու նոր խորհուրդ մը: Նոր նշանակուածներուն նպատակն էր բարեխաբէ կայանը եւ պահպանել անոր արհեստավարժ մակարդակը: Կայանը մեծ մասամբ կը պատկանի Ֆաթիմայի պետութեան եւ արբանեակներու միջոցով կը պատկերասփռուի աշխարհի տարածքին:

Ֆրանսա կը դիմագրաւէ երկրին աշխարհիկ ինքնութիւնը պահպանելու եւ կրօնական երկրորդ մեծագոյն համայնքին պահանջները գոհացնելու մարտահրաւրէրը, միաժամանակ թոյլ չտալով, որ կրօնական եւ ցեղային անջատողական շարժումներ ծաւալին:

Ընկերային ոչ մէկ հարց նոյնքան հրատապ է Ֆրանսայի պետութեան համար, որքան՝ երկրին իսլամները ֆրանսական ընկերութեան մէջ համարակելու դժուարութիւնը: Լաչակը՝ իսլամական խորհրդանիշ մը, քաղաքական ականի կը վերածուի երկրին մէջ:

Սեպտեմբերի սկիզբը, երբ Ֆրանսայի մէջ դեռատի երկու աղջիկներ դպրոցէն վտարուեցան լաչակ գործածելու պատճառով, ստեղծուեցաւ բանավէճ մը, որ խոր անդրադարձներ ունեցաւ ֆրանսական ընկերութեան մէջ: Ֆրանսա ծառայութիւնը օտար գաղթականները լաւ ֆրանսացիներու վերածելու իր պատմութեամբ: Անիկա կը ձգտի աշխարհիկ կարգերու իր աւանդութիւնը հաշտեցնել ֆրանսացի իսլամներուն ինքնութեան փոփոխութիւնը: Սեպտեմբեր 11 յարձակումներէն ետք այս լարուածութիւնը քաշելի սաստկացաւ, երբ սկսաւ տիրել այն մտազայտութիւնը, թէ ինքնաճանաչման ցանկութիւնը փայփայտող երիտասարդ իսլամներ կրնան ծայրայեղ իսլամութեան հետեւորդներ դառնալ: Ֆրանսայի մէջ կը բնակին ինչու 5 միլիոն իսլամներ եւ իսլամութիւնը երկրին երկրորդ կրօնն է:

Սակայն Ֆրանսայի մէջ պետութիւնը կը դեկավարէ կրթական համակարգը, որուն նպատակն է Ֆրանսայի քաղաքացիները պատրաստել: Հետեւաբար դպրոցներ պարտաւոր են կիրարկել աշխարհիկ սկզբունքներ: Լաչակ դնելու պատճառով դպրոցէն վտարուած երկու իսլամ քոյրեր կ'ըսեն. «Ֆրանսա կը պահուրտի աշխարհիկ սկզբունքներու ետին, որովհետեւ իսլամութիւնը նոր բան մըն է եւ վախ կը պատճառէ: Ես Ֆրանսացի եմ, ծնած եմ Ֆրանսա: Սակայն ֆրանսացի ըլլալու տուեալները ինչ են. կաթոլիկութիւն: Կը թուի, թէ իսլամ ըլլալու պարագային այս երկրին չենք պատկանիր»:

Երկու տարբեր հարցեր կան այս վէճին մէջ: Առաջինը ինքնութեան հարցն է. ինչ կը նշանակէ իսլամ ըլլալ: Երկրորդը անվտանգութեան

հարցն է, մանաւանդ այն վայրը, թէ արմատական իսլամութիւնը ո՞ր կրնայ առաջնորդել: Երկուքը կրնան իրարու կապուած ըլլալ: Սակայն ընդհանրապէս անոնք կապուած չեն եւ տիրող կարծիքը այն է, թէ նման առնչութիւններ չկան որոշ պիտակով մը կը խարանեն Ֆրանսայի իսլամները:

Իսլամները նորութիւն չեն Ֆրանսայի մէջ: 20րդ դարու սկիզբէն ի վեր հիւսիսային Աֆրիկէն իսլամներ կը գաղթեն դէպի Ֆրանսա: Ինչ որ նոր է, ինչպէս կը բացատրէ Փարիզի համալսարանէն ընկերաբան մը, այն է, թէ իսլամ աղջիկներ սկսած են փոքր տարիքէն լաչակ դնել եւ շարունակել զայն կրել չափահաս տարիքին: Այս շարունակութիւնը շեշտուած է մանկապարտէզէն սկսած աղջիկներու մօտ, որոնց մայրերը երբեք չեն ծածկած իրենց զուգար կամ պայքարած են լաչակին ձեռքազտելու համար:

Արուածքներու մէջ, ուր բռնաբարութիւն եւ բռտութեան արարքները հետզհետէ կը բազմանան, լաչակը մանկամարդ աղջիկները կը պաշտպանէ շարագործներու դէմ: Ուրիշներու կարծիքով, անիկա իսլամներու երկրորդ սերունդին յատուկ երեւոյթ մըն է: Ազգային պատկանելիութեան զգացումը աւելի շեշտուած է պատանիներու եւ երիտասարդներու մէջ, քան՝ անոնց ծնողներուն, որոնք առաջին անգամ իբրեւ գաղթական նաւէն իջած են եւ ոտք դրած՝ Ֆրանսայի հողին վրայ: Հարցը այն է, թէ Ֆրանսա եկուորները իր մէջ ձուլելու իր աւանդութեամբ եւ բազմամշակոյթ ընկերութեան դէմ իր մերժողական կեցուածքով համոզուած է, թէ իրապէս չենք սերունդ պէտք է քիչ մը աւելի ձուլուի, եւ ոչ՝ նուազ: Ի վերջոյ, ո՞ր երկիրը «Ձուլումի գերագոյն խորհուրդ» ունի, ինչպէս՝ Ֆրանսա:

Ֆրանսայի պետութիւնը կը հաւատայ, թէ իսլամներու նոր սերունդը բախումով մէջ է երկրին ձուլումի քաղաքականութեան հետ, ինչ որ զայն կը մղէ կասկածելու, թէ այս սերունդը գոհ է պիտի դառնայ ծայրայեղականներու: Այս պատճառով է, որ այս օրերու սկիզբը Ֆրանսայի ներքին գործոց նախարարը սկսաւ ճիշդ թափել իսլամութեան դուրս բերելու «նկուղներէն եւ կառատուներէն», անոր տալով պաշտօնական խօսք՝ իսլամական Հաւատքի Ֆրանսական խորհուրդին միջոցով: Մտադիրը հակառակ արդիւնք տուաւ, երբ այս խորհուրդին ներկայացուցչական մարմինի ընտրութիւններուն առիթով քուէներուն մեծամասնութիւնը տրուեցաւ ծայրայեղ իսլամներուն: Սակայն ներքին գործոց նախարարը կը շեշտէ, թէ կը նախընտրէ նման խմբավորումներու հետ գործ ունենալ հրապարակաւ, քան թէ՛ իսլամները դիմագրաւել քուլիսներու ետին:

Նախագահ ժաք Շիրաք վերջերս նոյն նպատակով հիմնեց երկրին աշխարհիկ կարգերուն հակոց յանձնախումբ մը, որ այժմ կը բնէ լուրաւազաններու մէջ իսլամ կիրներու համար առանձին ժամեր սահմանելու պահանջը: Ցանձնախումբը մինչեւ տարեվերջ ցուցումները պիտի կատարէ Ֆրանսայի աշխարհիկ դիմագրի միտքերով: Ֆրանսայի վարչապետ ժան Փիեռ Ունֆարէն կը գոչուցնէ, թէ Ֆրանսա կրնայ որդեգրել օրէնք մը, որ պարտադիր պիտի դարձնէ աշխարհիկ օրէնքը:

Սակայն ամէնէն հրատապ հարցը լաչակ ոչ միայն դպրոցներու, այլ նաեւ հանրային աշխատավայրերու մէջ ամբողջութեամբ արգիլելու հարցն է: Անիկա երկու մասի բաժնած է Ֆրանսայի: Անիկա երկու մասի բաժնած է Ֆրանսայի ներքին գործոց նախարարը դէմ է արգելելին, իսկ կրթութեան նախարարը՝ թեր: Նախագահ Շիրաք այս երկուքին միջեւ մնալով՝ մէկ կողմէ մտահոգ է, որ արմատական իսլամներ կրնան օգտագործել մանկամարդ աղջիկները, միւս կողմէ՝ ան կը գոչուցնէ քաղաքացիութեան ծառայող առիթով շեշտուած չենք արմատականներուն, կտրուական պահանջները լաչակի գործածութիւնը: «Աշխարհիկ կարգերը վիճելի չեն», կ'ըսէ նախագահ Շիրաք: Մանկամարդ աշխարհիկ կարգերու դուրս կու գան այն դպրոցներ, ուրիշ վտարուած էին երկու իսլամ աղջիկները: Անոնք կը կրնան պատանիներու յատուկ աջգնու խորհրդանիշներ Փիեռ, Ատիտաս, Նայք եւ Քուիքսիլը վաճառանիշով հագուստներու կոշիկներ: Անոնց շարքին են լաչակներու կրկններ, որոնց մագերթ կ'երեւին: Անոնք դպրոցէն դուրս գալէ անմիջապէս ետք կը ծածկեն իրենց ամբողջ զուգարը եւ լաչակ կը կապեն վիզին վրայ: «Այլապէս շատ ծիծաղելի պիտի ըլլար», կ'ըսէ վտարուած աշխարհիկներէն մէկը, «եթէ այս լրելութեամբ չդնէինք զայն»:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՊՈՒՅՆԵՐ

Պետութեան կողմէ ֆինանսաւորուած եւ պետութեան հակոցութեան տակ գործող իսլամական դպրոցներ (ինչպէս՝ կրօնական սեփական այլ վարժարաններ) նպատակաւորապէս են իսլամ նոր սերունդին տալու տարրական կրթութեան: Անոնք պատկանում են իսլամներու կրթութեան: Անոնք պատկանում են իսլամներու կրթութեան: Ֆրանսայի պետական վարժարաններուն նման կը ջատագովեն հանրապետութեան արժէքները:



Լաչակը՝ իսլամական խորհրդանիշ մը, քաղաքական ականի կը վերածուի Ֆրանսայի մէջ:

Սակայն կարգ մը քննադատներ մտահոգութիւն կը յայտնեն, թէ անոնք կրնան նաեւ քաջալերել իսլամ աշխարհիկութեան մեկուսացումը ու արմատականացումը:

Լիլի աշխատաւոր խաւի թաղամասերէն մէկուն մէջ այս տարի բացուած է Ֆրանսայի իսլամական առաջին սեփական վարժարանը, որ կը կրէ սպանացի արաբ փիլիսոփայ Աւերոսի անունը: Գարոցը տարածուած է Ալ Իման մզկիթին երրորդ յարկին վրայ: Աշակերտները հաստիակութիւն ունին մզկիթին զրադարանին եւ աղօթովալի: Գարոցը իսլամական սննդականութիւն հետեւողութեամբ ճաշեր կը սպասարկէ աշակերտներուն: Նման դպրոցի մը գաղափարը ստեղծուած է 1994ին, երբ մզկիթը սկսած է ուսում ընթացիկ լաչակ կրելու պատճառով իրենց դպրոցէն վտարուած 19 իսլամ աշակերտուհիներու: Պետութեան դէմ յաղթանակի իբրեւ խորհրդանիշ՝ մզկիթը բացած է իր սեփական ոչ պաշտօնական դպրոցը եւ կամաւոր ուսուցչուհիներու միջոցով օգնած է, որ աշակերտուհիները աւարտեն իրենց ուսումը:

Ֆրանսայի պետութիւնը կը փորձէ իր հակոցութեան տակ առնել իսլամական դպրոցները պաշտօն ըլլալու համար, թէ հոն ֆիզիքական պատիժներ պիտի չկիրարկուին, խղճի ազատութիւնը պիտի յարգուի եւ որոշ դասանիւթեր զանց պիտի չառնուին կամ պիտի չգրաքննուին:

Սեփական վարժարանի երեւոյթը արտատնփոր է Ֆրանսայի մէջ: Երկրին աւելի քան 9000 սեփական վարժարաններուն մեծ մասը կը պատկանի կաթոլիկ եկեղեցիին: Այս դպրոցները իրենց պիտեմէն 80 առ հարիւր կը ստանան պետութեան: Երկրին աշակերտներուն միայն 20 առ հարիւր կը յաճախէ կրօնական սեփական վարժարաններ, որոնք պարտաւոր են հետեւիլ պետական խիստ օրէնքներու, կիրարկել կրթական պետական ծրագիրը եւ յարգել պետական որեւէ վարժարանի յատուկ ապահովական պայմանները ու ուսուցիչներու որակը: Անոնք կրօն կրնան դասաւանդել միայն իբրեւ ազատ դասանիւթ: Աղօթելու ընտրութիւնը եւս ազատ է:

Ֆրանսացի պատասխանատուներ մտահոգութիւն կը յայտնեն, թէ Լիլի մզկիթը առնչուած է Ֆրանսայի իսլամական կազմակերպութիւններու միտքութեան հետ, որ կը քարոզէ իսլամութեան խիստ պահպանողական մեկնաբանութիւն մը:

Գարոցին պատասխանատուներէն մէկը՝ պատմութեան եւ աշխարհագրութեան ուսուցիչ մը, կ'ըսէ, թէ դպրոցին մէջ լաչակի գործածութիւնը առաջին քայլը պիտի ըլլայ պետութիւնը համոզելու, որ իր նախապաշարունակները մեղմացնէ լաչակի գործածութեան նկատմամբ: «Լաչակը համարկումի արգելք մը չէ», կ'ըսէ ան: Ընդունեցէք զայն: Այս է ճիշդ ժողովրդավարութիւնը:

Փարիզի համալսարանէն քաղաքական գիտութիւններու դասախօս մը՝ Իվ Սինթոմէր կ'ըսէ, թէ ժամանակն է, որ Ֆրանսայի պետութիւնը գիտակցի իր հաստիակութեան եւ հրաժարուի այս աշխարհիկ կարգերու իր բարոյութիւն, իսկ ֆրանսացիք ընդունին իսլամները՝ իբրեւ հաւասար իրաւունքներով քաղաքացիներ: Ան կ'ըսէ. «Ֆրանսա պէտք է անդրադառնայ, թէ անկարելի է այս ձեռով շարունակել երկար ժամանակ, եւ պէտք է հասկնայ, թէ աշխարհիկ պետութեան գաղափարը ժամանակավրէպ է: Ֆրանսացիք տակաւին չեն անդրադարձած, թէ այս մարդիկը կ'ապրին այս երկրին մէջ, Ֆրանսայի քաղաքացիներ են եւ ունին իրաւունքներ, զորս պիտի պաշտպանեն»:

(Հ.Ա.ՄԱԿՐԱՍԱՐ)

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ «ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌՆԱԶԱՅՆԻ ԹԻՒԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»Ի ՌԵԿԼԱՄԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԵՆԵՄԱՐԿՆԵՐԸ ՌԵԿԼԱՄԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԵՆԵՄԱՐԿՆԵՐԸ - 258526, 260115 եւ 241274:

ՄԱՐԳԱՐԷԻՆ ԿԻՆԸ, ԹԷ ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ԹԱԳՈՒՅԻ ՄԸ ԹԵՅՈ ՊԱՏԿԵՐԱՍՐԱԸ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻՐ ԱԿԱՍԱՅ ՍՆԱԼԻ ՄԸ ԸՆԱՍՐ, ՈՐ ՁԱՅՐՈՅՈՒ ՊԱՏՃԱՆԱՅ Ե ԻՍԼԱՄԵՐՈՒՆ: «ՏԸ ԿԱՐՏԸՆ» ԿԸ ԳՐԵ.

Թէյթ Պրիթըն պատկերասրահը Ալիշայի ուշագրաւ պատկերը ցուցադրելով կը միտէր ընդարձակել իր ծիրը, ինչպէս նաեւ՝ Միջին Արեւելքէն արուեստի գործերու ցուցադրութեամբ ներգրաւել այցելուներ բազմաթիւ մշակոյթներէ: Սակայն ինչպէս ամէն ինչ հակառակ արդիւնքը տուաւ:



Կասկած չկայ, թէ վաղը-թայն Փրինսէփի գեղանկարը գեղեցիկ էր: Սակայն, երբ պատկերասրահը զայն իր այցելուներուն աւելի հետաքրքրական դարձնելու համար նկարագրութիւն մը եւ պատմական բացատրութիւն մը կցեց անոր, աւելի թշնամիներ շահեցաւ, քան՝ բարեկամներ:

Գեղանկարին բացատրութիւնը զայն կը նկարագրէր իբրեւ Մոհամէտ մարգարէին կիներէն մէկը: Բազմաթիւ իսլամ այցելուներ երեւոյթը դատարարեցին իբրեւ սրբապղծութիւն, որովհետեւ իսլամական կրօնը կ'արգիլէ մարգարէին, անոր կիներուն կամ հարազատներուն մարդկային պատկերումը:

Սակայն բազմաթիւ դժգոհութիւններ լսելէ ետք, երբ պատկերասրահին պատասխանատուները պատմական ուսումնասիրութեան մը ձեռնարկեցին, անոնք յայտնաբերեցին ոչ դիտումնաւոր երկրորդ սխալ մը: Ալիշայի գեղանկարը երբեք չէր միտքը պատկերել Մոհամէտի կիներէն մէկը: Գեղանկարին մէջ երեւցող կինը շատ հաւանաբար Ալիշայ թագուհին էր, Հ. Ռայտըր Հակարտի «Շի» վէպին հերոսուհիներէն մէկը:

Իսլամական հանրային յարաբերութիւններու յանձնախումբին մէկ բողոքագրի պատասխանելով՝ Թէյթ պատկերասրահին տնօրէնը նամակի մը մէջ կը նշէ, թէ գեղանկարը առաջին անգամ 1887ին ցուցադրուած է Ռոյլը Աբա-տըմիին մէջ, այնուհետեւ բազմաթիւ առիթներով ցուցադրուած է Բրիտանիոյ տարածքին:

Ան կը գրէ. «Ա՛յն կատարած նոր ուսումնասիրութիւնը յստակօրէն ցոյց կու տայ, թէ այս գեղանկարին նպատակը Մոհամէտ մարգարէին կինը պատկերելն է: Անհիմն այն կարծիքը, թէ ան մարգարէին կիներ էր, ստեղծուած էր քանի մը տասնամեակ առաջ գեղանկարին կցուած արձանագրութիւններուն պատճառով: Իսլամութեան բազմաթիւ ճիշդագրութիւններ Մոհամէտ մարգարէին ընտանիքին պատկերումը կը նկատեն անընդունելի ընդօրինակութիւնը արարք»:

Թէյթ պատկերասրահը վաղըթայն Փրինսէփի «Ալիշայ» դիմանկարին բացատրութեան մէջ նշած էր, թէ անիկա կը պատկերէր Սոհամէտ մարգարէին կինը...

ներու, զորս միայն Աստուած կրնայ գործել»:

«Շատ կը ցաւիք, որ այս անհիմն երեւոյթութիւնը իբրեւ հաստատ իրողութիւն արձանագրուած էր պատին վրայ: Փրինսէփի դիմանկարը ամէնէն աւելի հակադեմոկրատիկ մըն է միջին արեւելեան «աշխարհիկ» նիւթերու ճաշակին, որ ընդհանրապէս էր վիթխորնէն ժամանակներուն: Փրինսէփ Ալիշայի անունը ընտրած էր հաւանաբար, որովհետեւ անիկա կ'առնչուէր աւանդական բանաստեղծութեան հետ, սակայն ան նաեւ թերեւս ի մտի ունէր գրական յատուկ գործ մը»:

«Պիտի շարունակեց ցուցադրել գեղանկարը, սակայն այս նոր ուսումնասիրութեան լոյսին տակ պիտի սրբագրենք անոր կցուած բացատրութիւնը»:

«Թէյթի նպատակը իր իսլամ այցելուներուն զայրոյթը պատճառելն էր: Պատկերասրահը անկեղծօրէն ներողամտութիւն կը խնդրէ իր սխալ բացատրութեան համար»:

Պատկերասրահը դիմած է զանազան հեղինակաւոր անձերու, Քնչպէս՝ Բրիտանիոյ իսլամական թղթի պատասխանատու շէյխ Ջաքի Պատտուիի, որ կասկած չայտնած է, թէ դիմանկարը կը միտէր պատկերել մարգարէին կինը: Պատկերասրահին պատասխանատուներուն համաձայն, գեղանկարիչը «Ալիշայ» անունը ընտրած է հաւանաբար, որովհետեւ անիկա յաճախ յիշատակուած է բազմադարեան բանաստեղծութիւններու մէջ: Սակայն ան հաւանաբար ի մտի ունէր գրական յատուկ գործ մը. 1887ին, այն տարին, որ առաջին անգամ հանրութեան ցուցադրուած է գեղանկարը, հրատարակուած է Ռայտըր Հակարտի «Շի» արկածախնդրական վէպը, որուն տիպարներէն էր Ալիշայ թագուհին:

Իսլամական հանրային յարաբերութիւններու յանձնախումբին մէկ ներկայացուցիչը կ'ըսէ, թէ մղուած պայքարը ցայտուն մէկ օրինակն է Բրիտանիոյ իսլամական համայնքին գործած ներկայութեան: «Ուրիշ ենք, որ գեղանկարին բացատրութեան դէմ մղած մեր պայքարը յաջողութեամբ աւարտեցաւ: Մոհամէտ մարգարէին կինը պատկերող գեղանկարի մարգարէին անհիմն էր: Ասիկա պարզապէս ցոյց կու տայ իսլամութեան եւ իսլամական սոցիոլոգիաներուն նկատմամբ տգիտութեան մակարդակը»:

Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԷՇՐԵՖԻԷ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ Ս. ՅԱԿՈՐԻ ՇԱԲԹՈՒՄՆ 8 - 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003

- Երկուշաբթի, 8 Դեկտեմբեր 2003 Հսկում երեկոյան ժամը 7:30ին
- Երեքշաբթի, 9 Դեկտեմբեր 2003 Հսկում երեկոյան ժամը 7:30ին
- Չորեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2003 Հսկում երեկոյան ժամը 7:30ին
- Հինգշաբթի, 11 Դեկտեմբեր 2003ի առաւօտեան 8:00ին
Ս. Յակոր Մծբնայ Հայրապետի նուիրում շարականներու ունկնդրութիւն
- Ներկայութեամբ՝ հայկական վարժարաններու աշակերտութեան:
- 8:45ին Աղօթքի եւ շարականներու մրցանք Հայկական վարժարաններու նախակրթարաններու աշակերտութեանց մասնակցութեամբ: Մրցանակաբաշխութիւն:
- Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003 Հսկում երեկոյան ժամը 7:30ին
- Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2003 Ս. Հաղորդութիւն առաւօտեան ժամը 8:00ին:

- Աղօթիւնք, ոչխարներու պէնում, մատաղի-«հերիսայի» պատրաստութիւն, կէսօրէ ետք ժամը 4:00էն սկսեալ եւ ամբողջ գիշերը:
- Մուսա Լեբան, Այնճարի տաւուլ-վուռնա:
- Ազգագրական, գաւառական, հայրենասիրական երգերով եւ նուագներով ելոյթ կ'ունենան ՍԵԿՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ եւ ՇԱԲԷ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
- Հսկում ժամը 5:00ին:
- Ուխտի սոմավառութիւն եկեղեցոյ մէջ եւ աղօթքի եւ խոկումի պահ - ամբողջ գիշերը:
- Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003 - Առաւօտեան ժամերգութիւն ժամը 7:30ին - Ս. եւ Անմահ պատարագ ժամը 9:30ին

Պիտի պատարագ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)
- Բարերարներու հոգեհանգիստ - մատաղօրիւնէք ժամը 11:30ին:
ԹԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 5608 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՎՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂՂԱՇԱՅԱՑ
1. Երկրի մը քաղաքացի - Օձի տեսակ:	1. Ճարտար, վարպետ:
2. Կռուի տեսակ:	2. Խայտոց - Յովհաննան:
3. Պատմիչ Ստեփանոս Տարօնեցի:	3. ՏՀաս խաղող - Ժամանցեյ:
4. Չուարթ - Գիշատիչ թռչուն:	4. Երգուելի քերթուած - Լիցք - Տարիք:
5. Աղբիւր - Նոյն գիրքը - Կէս՝ պատրաստ:	5. Ճանկ - Դարձեալ (Հակ.):
6. Աշխուժ, եռանդուն:	6. Աքաղաղի կատար - Յուցական անական:
7. Գեղամ Սարեանի երկերէն - Ամ:	7. Բորբոքուն:
8. Վայր - Թուլամորթ:	8. Պարտեսակ - Գէշ, յոռի:
9. Պարսիկ կուսակալ - Այբուբենէն:	9. Ցարաբերական դերանուն - Պատկեր - Երկ-վար:
10. Տիգրակ - Արատ:	10. Կրակ - Գոգնոց կամ սփածանելի:

ԹԻԻ 5607 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	S	U	R	U	N	U	8	T
2	O	R	T	R	Q	B	R	D
3	U	T	U	U	T	U	U	U
4	U	N	B	R	B	R	T	U
5	T	R	Q	U	N	T	U	U
6	U	U	L	T	U	U	N	
7	U	U	U	U	U	U	U	S
8	U	L	U	U	U	U	T	N
9	Q	U	R	T	U	U	N	R
10	R	R	U	U	T	T	R	Q

ՃԱՏՐԱԿ



1 ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԵՄԲՈՒՆՈՎ

ՓԱՆՁԱՆՈՎԻՉ Ս. - ՊԻԵՆԱԺԱԸ Ս.

2 ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԵՄԲՈՒՆՈՎ

ԷԼԻԱՍ Լ. - ԶՈՐԹԵՎՈՍՍ Ս.

3 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԵՄԲՈՒՆՈՎ

ՖԱԼԵՕԼ - ՆՈՍՍՍ

4 ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԵՄԲՈՒՆՈՎ

ՍԹՅՅԵՆՎԻՉ Ս. - ՄԻԼԵՆԹԵՎԻՉ Վ.

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՏՂԵՐԸ ★

- ԽՈՑ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Ուսանողները պիտի չկարենան իրենց ակնկալած բարձր նիշերը ունենալ: Դուք եւս, եթէ անոնց շարքին էք, պիտի հասկնաք, թէ ձեր բաժնի միջոցով բաւարար չե՞ն:
- ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Այսօր ոչ մէկ համաձայնագիր ստորագրեցէք. նախքան ձեր համաձայնութիւնը՝ հարցուցէք կարծիքը այս հարցին մէջ մասնագէտ բարեկամի: Մանաւանդ հոն կայ կէտ մը, որ կասկածելի է:
- ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Ձեր ստանձնած պատասխանատուութիւնը ծանր կը կշռէ ձեր վրայ: Ուրիշի մը յանձնեցէք մաս մը ձեր պարտաւորութեան եւ վստահեցէք այդ անձին:
- ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Ձեր դիմագրաւած հարցերը լաւ ձեւով լուծելու գաղտնիքը գիտէք: Նոյնիսկ կ'ուզէք հանդիպել կամ կատակի համար ձեռք առնել ձեր դիմացի անձերը:
- ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Երազիր մը, որ շուտով պիտի իրագործուէր, յանկարծ պիտի ունենայ դանդաղեցում եւ կամ հաւանաբար բոլորովին դադարի լուծուելէ՝ անժամայէս: Համբերեցէք:
- ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Աշխատանքի մէջ ձեր կոնակէն հարուած մը ստանալը հաւանական է. շատ մի՛ հակառակիք մարդոց հետ գրուցելու պահերուն: Ձանացէք ըլլալ դիւանագետ:
- ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Ուսանող ըլլաք թէ պարզ աշխատող, ջանացէք ըլլալ յարատեւող, իրաւունքով եւ արդարութեամբ հարցերը բնակարկող, որպէսզի յաջողիք: Իրապաշտ եղէք:
- ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Կ'ուզէք ամէն տեսակ բան ընել եւ յաջողիլ, բայց դժուարութիւններ կան ձեր դիմաց, հետեւաբար պետք է ըլլաք համբերող եւ հարցերը դիտել իրենց ճիշդ ձեւին մէջ: Բայց ամէն մարդ պարտաւոր է ձեզի, ձեր կարողականութեան, ձեր լաւ դատողութեան:
- ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Շատ շղայի՛ն էք, ամէնէն փոքր հարցը կը դիտէք խոշորացոյցով: Քիչ մը ւաւելի հանգիստի ժամանակ տուէք: Մարդոց մի՛ մօտեցնա, միայն սիրելի բարեկամներու հետ կապ պահեցէք:
- ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Աշխատանքի մէջ թաղուած էք, բեռնաւորուած: Բայց այսպէս մի՛ շարունակէք, որպէսզի ւաւելի հանգիստ ձեռք առնաք: Գոյնաւոր ձեր ձեր գործակիցները:
- ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Ձեր գաւակներուն հետզհետէ մեծցող կարիքներէն շատ կը վախճաք եւ կը կարծէք, որ վերածուած էք կաթնու կովու մը, միշտ տուող, միշտ գոհացնող:
- ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Սիրոյ ցաւալի պատմութիւն մը տակաւին վերջ չէ գտած. դեռ կը վախճաք անոր ստեղծելիք հարցերէն: Եղբք անտարբեր եւ հարցը ձգեցէք ժամանակի կարգադրութեան: Ժամանակը կը լուծէ հարցերը:

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆՄԵՐԻՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԿ

ԼԱՐԱ ՊԱԼԱՏԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Յարատեւորէն գեղարուեստական աշխուժութիւն ապրող ժողովրդի «Մէն Նիքրոլայի աստիճաններ»ը այս ամիս կը հիւրընկալեն լուսանկարչական պոյզ ցուցահանդէսներ, ուր պիտի ցուցադրուին Լարա Պալատի եւ ժամանա ժամանակի գործերը:

Լարա Պալատի լուսանկարներուն այս հաւաքածոն կը կրէ... Երկու անուն՝ «Արտուստ պալատի» եւ «Լ'արապետ», որոնցմով կը բացատրուին ցուցահանդէսի նիւթերը: Գահիրէ հաստատուած արուեստագէտը իր գործերը ցուցադրած է երոստական եւ ամերիկեան մեծ քաղաքներու, ինչպէս նաեւ Թոքիոյ մէջ եւ վերջին քանի մը տարիներուն յաջողած է ապահովել միջազգային հռչակ: Ան կը յատկանշուի իր անձնական կեանքը աշխարհի երեւոյթներուն միախառնող եւ ալիքաւոր վանոնքը ընդհանուրին հետ բաժնող լուսանկարներով: Պէտք է նշել սակայն, որ ենթակալական բնոյթի գործերու կողքին, Լարա Պալատի լուսանկարները ունին նաեւ վաւերագրական բնոյթ:

Լարա Պալատի այս ցուցահանդէսին «Արտուստ պալատի» բաժնին լուսանկարները ներշնչուած են եգիպտական եւ իսլամական մշակոյթին եւ յատկապէս անոր մէջ կիներու դիրքին: Իսկ «Լ'արա-



պետ»ը հետաքրքրական «դիմանկար»ներու շարք մըն է... արուեստագէտին ոտքերուն, որոնք լուսանկարուած են տարբեր վայրերու մէջ, տարբեր հոգեվիճակներ փոխանցող ենթահողներու դիմաց:

Լարա Պալատի «Լ'արապետ» եւ «Արտուստ պալատի» խորագիրները կրող ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 23 Դեկտեմբեր: Չայն կարելի է այցելել առաւօտեան ժամը 10:30էն մինչեւ երեկոյան ժամը 6:30:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԷՅՐՈՒԹ
ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 21°C
ԳԻՇԵՐ՝ 14°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 64%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԵՐԻ ԱՄՈՒՄԸ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ԱՄԵՐԻԿԱ ԻՆՉՊՈՒՅՍ ԿԸ ԶԻՆԷ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑ ԿԵՂՈՆ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԻՆՔՆԱՐԶԱԿ ՍԱՒԱՌՆԱԿՆԵՐՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՕԴԱԿԱՅԱՆԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՏԱՆԱՅԻ ՄԷՋ

Ամերիկեան «Լոս Անճելըս Թայմ»-ի սեփական թղթակիցը 10 Հոկտեմբեր թուականով կը գրէ Տիգրանակերտէն:

Ասիոյ հարաւարեւմտեան քաղաքին վրայ շինուած այս քաղաքը՝ Տիգրանակերտ, այն կեդրոնն է, ուր ամերիկեան օդուժի մարդիկը ինքնարձակ սաւառակներու (ճէք) գորարար կոնուս մը կը պատրաստեն Միջին Արեւելի մէջ:

Տ - 84 ինքնարձակներու երեք խումբերը (իրաքեան չիւրը՝ 75 օդանավ) արդէն իսկ գործածութեան մէջ են եւ չորրորդ խումբն ալ, տարին չլրացած, պիտի աւելնայ անոնց վրայ, որով Թուրքիա ընդամենը 300 ինքնարձակ սաւառակ պիտի ունենայ:

Թուրք օդաչուները մարզելու այս գործը ազդու մէկ օդակը կը կազմէ Հիւսիսային Ատլանտեանի պաշտպանութեան դաշնագիրին: Թուրքերը կը մարզուին գիշեր-ցերեկ, Տիգրանակերտի մէջ: (Թուրքակիցը միշտ «Տիգրանակերտ» բառը կը գործածէ): Այս քաղաքը շրջապատող 40 ոտքնոց պարիսպին վերեւ ինքնարձակները կը սաւառնին եւ Տիգրիս գետի փոխարէն վրայ, ուրբակոծման փորձերը կը կատարուին:

Ն. Ք. 230 թուականէն սկսեալ Տիգրանակերտ եղած է թէ՛ հոռմեական գաղթականը եւ թէ՛ ռազմազաշտ հոռմեացիներու, պարսիկներու, սելուկներու, արաբներու, հայերու եւ թուրքերու միջեւ:

Սուեզի ջրանցքին բացումէն առաջ այս քաղաքը էր, որ գլխաւորաբար կը ներկայացնէր անուտակալ խոտորանակ ուղիի Փոքր Ասիոյ մէջէն դեպի արեւմտեան Ասիա եւ ռազմական տեսակետով ալ շատ արժեքաւոր կեդրոն մըն էր:

Տիգրանակերտի դիրքը այսօր ալ շատ կարեւոր է եւ Ատլանտեանի հարաւարեւելեան ճակատին ամէնէն յառաջադիր մարտկոցը կը ներկայացնէ, միեւնոյն ատեն Ամերիկայի ինքնարձակներու մարզարանին խորիսին է Թուրքիոյ մէջ:


Թուրքիոյ մէջ ամերիկացի մարզիչներու պետն է գնդ. ձեռք Զէյթ, որ Քորեայի պատերազմին ինքնարձակներու վերաբերեցող մէկն է եւ ամերիկեան օդուժին միւս պաշտօնեաներուն հետ միասին կը կազմէ Թուրքիոյ մէջ ամերիկացի մարզիչներու ջոկատը: Ամերիկացի պաշտօնեաները վստահ են, որ թրքական ինքնարձակներու օդուժի այս հատուածը ի վիճակի է ինքզինքը պաշտպանելու՝ աշխարհի լուսագոյն ինքնարձակներու յարձակման դէմ:

«Շատ ուրախ եմ, որ թուրքերը մեր կողքին են», ըսած է գնդ. Զէյթ, իր աշակերտներուն կատարած օդային փորձերը դիտելէ ետք:

«Թուրք օդանաւորները բացառիկ ընդունակութիւն ունին եւ պատրաստ են սորվելու, ինչ որ մենք կը թելադրենք իրենց», հաւաստած է գնդապետը:

(ՀԱՏՈՒԱԾ)

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Զ



ՊԱՍՔԵԹՊՈՒ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԱԶՄԵՐԸ

ՅԱԳԹԱՆԱԿՆԵՐ ԱՐՉԱՆԱԳՐԵՑԻՆ

Լիբանանի պատերազմի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանության 4րդ հանգրուանի մրցումներուն, երէկ Հ.Մ.Ը.Մ. Պէրլուք արձանագրեց յաջողական իր չորրորդ յաղթանակը, երբ 46 - 43 արդիւնքով պարտութեան մատնեց Շանվիլը, որ այսպիսով կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը:

Սկզբունքով, այս մրցումը տեղի պիտի ունենար Անդրանիկի «Տեմիրճեան» կերտին մէջ (Նաքթա): Մինչ Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները կը պատրաստուէին այս մրցումը կատարելու, յանկարծ անոնց տեղեկացուեցաւ, որ մրցումը փոխադրուած է... Շանվիլի դաշտ: Անոնք հապճեպով ուղղուեցան իրենց մրցակիցին դաշտը, ուր արձանագրեցին իրենց յաղթանակը՝ թէւ միայն երեք կէտի տարբերութեամբ:

● ՏՂՈՅ Բ. դասակարգի ախոյեանության 3րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը, Շաքաթ օր արձանագրեց եղանակի իր երկրորդ յաղթանակը, երբ Ղաչի-րի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին 75 - 61 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրերը՝ Ղաչիրը:

Հ.Մ.Ը.Մ. ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆ ԽՈՒՄԵՐՈՒ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

Յառաջիկայ Հինգշաբթի, 11 Դեկտեմբերին, Մոն լա Սալի մէջ կը սկսի փինկ փոնկի արարական ախոյեան խումբերու 15րդ ախոյեանութեան մրցաշարքը, որ պիտի աւարտի 17 Դեկտեմբերին: Նշենք, թէ մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող աղջկանց 12 եւ տղոց 18 խումբերը արդէն իսկ սկսած են ժամանել Լիբանան:

Աղջկանց տիտղոսակիր՝ Հ.Մ.Ը.Մ., որ անցեալ տարի այդ բաժակը շահեցաւ Եգիպտոսի մէջ, իր ամէն կարելին պիտի ընէ անգամ մը եւս բաժակը բարձրացնելու:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմին մաս կը կազմեն Լարա Բէյքապեան, Լիլա Պարիքեան, Նոէլ Բէշիշեան, Դուին Մունջողլեան եւ Մարիանա Սոմունճեան

- Սահակեան: Անոնց պիտի միանայ վեցերորդ մարտի մը՝ Չինաստանի փինկ փոնկի աղջկանց ազգային խումբին մաս կազմող Բաս Զինկի, որ վաղը կը ժամանէ Լիբանան: Նշենք, թէ Չինկի աղջկանց աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ դասուած է 25րդ:

Հ.Մ.Ը.Մ. ԿՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթվա երէկ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կրեց եղանակի իր չորրորդ պարտութիւնը, երբ Պէրլուքի Քաղաքապետարանի դաշտին վրայ պարտուեցաւ Անսարին:

Իր կատարած Շաքաթ օրուան մրցումին, Հ.Մ.Ը.Մ.ի կազմը, գրեթէ ոչինչ կրցաւ ընել, բացի վերջին տասը վայրկեաններուն:

Իր բերդին ներս երեք կոլ ստանալէ ետք միայն, Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը ճնշեցին Չիատ Սամատի բերդին վրայ, նշանակելով երկու կոլ: Գրո Բէհէյեան փենսիլթով (81րդ) նշանակեց առաջին կոլը, իսկ Արթուր Քոչարեան երկրորդը (89րդ): Մրցումին կորուած վայրկեաններուն, Դրոյի կողմնակի փոխանցումը պատկեցաւ Անսարի բերդին սիւնին կողմէ,

այսպէսով արգելք հանդիսանալով, որ Հ.Մ.Ը.Մ. նշանակէ իր հաւասարութեան կոլը (3 - 3):

Սակայն արդեօք պէտք է տխրի այդ նշանակումը կողին համար, որովհետեւ ամբողջ 80 վայրկեան դաշտին վրայ ոչինչ կատարած Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը միայն վերջին տասը վայրկեաններուն է, որ պէտք է Ստորեւ 5րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Օլիմպիք - Սաժէս 4-1
Ահտ - Հ.Մ.Ը.Մ. 3-1
Նրժմէ - Շապապ Սահէլ 1-0
Անսար - Հ.Մ.Ը.Մ. 3-2
Թատամոն Սուր - Սալամ 0-2
Մապարա - Սաֆա 1-1

Ստորեւ դասաւորումը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Նրժմէ	4	1	0	12	5	13
2.- Ահտ	4	1	0	9	3	13
3.- Օլիմպիք	4	0	1	9	6	12
4.- Անսար	2	1	2	9	9	7
5.- Սաժէս	2	1	2	1	8	7
6.- Մապարա	1	3	1	10	8	6
7.- Թատամոն	2	0	3	4	5	6
8.- Հ.Մ.Ը.Մ.	2	0	3	5	6	6
9.- Սաֆա	1	3	1	6	8	6
10.- Սահէլ	1	1	3	4	6	4
11.- Սալամ	1	0	4	6	10	3
12.- Հ.Մ.Ը.Մ.	0	1	4	6	11	1

ԼՈՒՐԵՐ ՀԵԾԵԼԱՐՇԱԻ ԱՇԽԱՐՀԷՆ

Սպանացի հեծելախումբը Խոսէ - Մարիա Խեմենէս, որ նախապէս կը նկատուէր հինգ անգամ Ֆրանսայի հեծելաբաժնի շրջավազքին («Թուր Տը Ֆրանս») տիրացած Միկէլ Ինտորպիսի յաջողութիւնը, անցեալ շաբաթվա երէկ մահացաւ: Մատրիտի Սան Միկէլ հիւանդանոցին կողմէ կատարուած յայտարարութեան համաձայն, 32 տարեկան հեծելախումբը մահացաւ արտի տագնապի հետեւանքով: 2002ին հեծելաբաժնի արհեստավար Սպանիայի հեծելաբաժնի 1998էն 2001 երեք անգամ ընտրուեցաւ Սպանիայի հեծելաբաժնի շրջավազքի («Վուլթրաս») լեռնային հանգրուաններու յաւազոյն հեծելախումբը: Նշենք, թէ ան արհեստավար դարձաւ 1993ին:

ՈՊՊԵՐԹՕ ԵՐԱՍ ՄԻԱՅՄ «ԼԻՊԵՐԹ» ԽՈՒՄԵՐԻՆ

Սպանացի հեծելախումբը՝ Ռոպերթո Վերաս, որ Ֆրանսայի հեծելաբաժնի շրջավազքին («Թուր Տը Ֆրանս») անբիկացի Լէնս Արմարոնիկի աջակցութիւն էր, անցեալ շաբաթվա երէկ իր խումբը՝ «Եու. Էս. Փոսթալ» լքելով միացաւ «Լիպերթի» խումբին: Վատահաբար, որ 29 տարեկան Վերասի մեկնումը, մեծ հարուած մը պիտի հասցնէ Արմարոնիկի, որ յառաջիկայ եղանակին իր ամէն կարելին պիտի ընէ վեցերորդ անգամ ըլլալով շահելու այս շրջավազքը: Ըստ սպանական մատուցի, «Լիպերթի» երեք տարուան պայմանագրութիւն մը կ'ունենա Կոն. տտեկան շուրջ 1,2 միլիոն եւրո վճարելով:

ARMENIA 2020

ՀԱՅԱՍՏԱՆ 2020

ՄՐՅՈՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԸ 2020 ԹՈՒՎԱԿԱՆԻՆ

ARMENIA 2020

«Հայաստան 2020» հասարակական ոչ առեւտրային ծրագիրը յայտարարում է մրցոյթ հետեւեալ նոսրանցիւններով.

- Ակնարկ 1,000.00 ԱՄՆ տոլար
- Յօդուածների / հրապարակումների շարք 2,000.00 ԱՄՆ տոլար
- Տեսաւեպրոտոմների / հեռուստատեսային թոք - շոնքի շարք 3,000.00 ԱՄՆ տոլար
- Սցենար 5,000.00 ԱՄՆ տոլար

Մենք փնտրում ենք մեր ինքնատիպ պատկերացումներ այն մասին, թէ ինչպիսիք կը լինի Հայաստանը 20 տարի անց: Մրցոյթին ներկայացուող պնդումը, յօդուածը, յօդուածը կամ սցենարը պէտք է պատկերի կամ նկարագրի սովորական հայ մարդու առօրեան մօտ պայագայում այն փոփոխութիւնների ներքոյ, որոնք հաւանական են պետութեան տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային, կրօնական ոլորտներում արտաքին եւ ներքին փոփոխութիւնների շնորհիւ: Լեռնայացուող բոլոր միւթերը պէտք է հիմնուեն «Հայաստան 2020» ծրագրի շրջանակներում իրականացուած հետազոտութիւնների արդիւնքների եւ մշակուած 4 հիմնական սցենարների վրայ: Նշուած միւթերը տեղադրուած են ծրագրի ինտերնետային էջում՝ www.armenia2020.org, հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզուներով:

ՊԱՇՏՊԱՆՆԵՐ ԵՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Ընդհանուր պահանջներ.

- Սցենարը կարող են ներկայացուել հայերէն, ռուսերէն կամ անգլերէն լեզուներով, հայ կամ օտարերկրեայ անհատների, հայկական կամ օտարերկրեայ կազմակերպութիւնների, Հայաստանի քաղաքացիների եւ արտասահմանցիների կողմից:
- Եթէ նախքան մրցոյթին մասնակցելու միւթը արդէն տպագրուել, հրատարակուել կամ հեռարձակուել է, ապա ներկայացուած միւթում պարտադիր պէտք է նշուի լրատուամիջոցի անուանումը, հրատարակման կամ հեռարձակման ամսաթիւը, տպագրուած միւթի վերնագիրը ու համարը:
- «Հայաստան 2020» ծրագիրը իրաւունք է վերապահուել ընդունելու, մերժելու եւ խմբագրելու մրցոյթին ներկայացուած միւթերը:
- Ներկայացուած միւթերը չեն վերադարձուելու:
- Մրցանակները չեն կարող փոխանցուել այլ անձանց:
- Ստացուած միւթերի բովանդակութիւնը ենթակալ չէ բնարկման դիմորդի եւ ծրագրի ներկայացուցչի միջեւ:
- Պաշտպանի յայտարարման դեպքում միւթը չի ընդգրկուելու մրցոյթում: Բոլոր յղումները պէտք է պահպանուեն եւ ներկայացուեն:
- Ներկայացուող միւթը պէտք է լինի բնօրինակ, ցրանու ընդգրկուած փաստերը՝ ստոյգ եւ ճշուած:
- Նիւթի հրապարակումը պէտք է խախտի որեւէ անհատի կամ կազմակերպութեան հեղինակային իրաւունքը:
- Բոլոր ներկայացուած միւթերը եւ դրանց հրապարակման իրաւունքը պատկանում է «Հայաստան 2020» ծրագրին: Նիւթերը կարող են օգտագործուել, խմբագրուել եւ մէքերուել գովազդային կամ այլ նպատակներով, ներառեալ՝ տեղադրուել ինտերնետային էջի վրայ (www.armenia2020.org) առանց ներկայացուցչի համաձայնութեան կամ դրամական պարգեւատրման: «Հայաստան 2020» ծրագիրը հեղինակների համաձայնութեամբ կարող է օգտագործուել մրցոյթի յաղող ձեռնարկում անձանց կամ կազմակերպութիւնների իրաւունք է վերապահուել օգտագործելու մրցոյթի յաղող ձեռնարկում անձանց կամ կազմակերպութիւնների անուններն ու հասցէները մրցոյթին առնչուող գովազդային նպատակներով, առանց գովազդում, հեղինակի թղթատուութեան կամ դրամական փոխանցումից, բացառութեամբ այն դեպքերի, երբ դա արգելուած է օրէնքով:
- «Հայաստան 2020» ծրագիրը իրաւունք է վերապահուել փոփոխելու, լրացնելու կամ չեղեալ համարելու մրցոյթի կանոնները անհրաժեշտութեան դեպքում:

Ս. ԿԱՆՈՆԸ

- Մրցոյթին կարող են մասնակցել 2003 թ. Նոյեմբերի 1ի դրութեամբ 16 տարեկան բոլոր անձինք: Նախընտրութիւնը տրուելու է ԲՈՒՔԵՐԻ ՆՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՒ ՍԱՊԻՐԱՆՈՒՆԵՐԻՆ:
- Ակնարկը պէտք է պարունակի ոչ անէլ բան 1500-2500 բառ (3-5 էջ, առաջարկուող տառատեսակը՝ Times New Roman 12):
- Ակնարկին կից առանձին էջի վրայ պէտք է նշուի հեղինակի անունը, հասցէն, ուսումնական հաստատութեան հասցէն ու բաժնի, ընկալն Գեղարքունի հեղինակի հասցէն ու հեռախոսահամարները:
- Ընդունուել են նաեւ մեկից անէլ հեղինակ ունեցող միւթեր:

Ը. ԶՅՈՒՄԸ / ԸՐԱՊՈՒՄՆԱԿՆԵՐԻ ԶՐԵ

- Մրցոյթին կարող են մասնակցել լրագրողներ, որոնք աշխատում են լրի կամ կէս դրոյթով որեւէ հայկական կամ արտասահմանեան օրաթերթում, ամսագրում, խմբագրութիւնում, ինտերնետային ամսագրում: Կարող են դիմել նաեւ անկախ լրագրողներ:

Բոլոր միւթերը պէտք է ստացուած լինեն «Հայաստան 2020» ծրագրի կողմից (Փոստային փոխ. «Հայաստան 2020», Ֆեդեւս, Մաշտոցի փ. 40, բն. 35, 375009, Երեւան, ՀՀ կամ էլ. փոստ. award@armenia2020.org): Նիւթերը անձանց առաքելու դեպքում կարող էք պահանջել ստացական: Մրցոյթի արդիւնքների մասին տեղեկացուելու են միայն յաղողները:

